Azg
Armenian daily
12 ՓԵՏՐՈՒԱՐ 1994 ՇԱԲԱԹ № 26 (529)

Ղարաբաղյան ուժերը Քելբաջարի շրջանում գրավել են 2 բարձունք

Երեկ եւ նախորդ գիշեր ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղի հարավարեւելյան եւ հյուսիսարեւմտյան ռազմաճակատներում շարունակվում էին: ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի տվյալներով, Քելբաջարի շրջանում ղարաբաղյան ուժերին հաջողվել է կասեցնել թշնամու գրոհը, անցնել հակահարձակման եւ գրավել 2 բարձունք: Կորուստների մասին տեղեկություններ չեն հայտնվում: Երեկ օրվա առաջին կեսին դիրքային մարտերը ռազմաճակատի այս հատվածում շարունակվում էին: Ինչ վերաբերում է հարավարեւելյան ռազմաճակատին, որտեղ փետրվարի 10-ին ադրբեջանական կազմավորումներն անցել էին լայնածավալ հարձակման, ապա Սնարք գործակալությունը հաղորդում է, թե երեկ ռազմական գործողություններն այս ուղղությամբ շարունակվում էին: Ղարաբաղյան ուժերը հաջողությամբ կասեցնում էին թշնամու գրոհները: Մանրամասնություններ առայժմ չկան: Ղարաբաղյան ռազմաճակատի մյուս հատվածներում երեկ եւ նախորդ գիշեր էական գործողություններ տեղի չեն ունեցել, թեեւ ԼՂՀ ռազմական հետախուզության տվյալների համաձայն, ռազմաճակատի արեւելյան հատվածի ողջ երկայնքով նկատվում են հակառակորդի կենդանի ուժի եւ մարտական տեխնիկայի նորանոր կուտակումներ:

Անցած երկու օրերի ընթացքում ռազմական լուրջ գործողություններ տեղի չեն ունեցել նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում:

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

Վրացական խաղաքարտ

Փետրվարի 10-ին, ժամը 23:30-ին, Վրաստանի Մառնեուլի շրջանում, խրամ գետանցում, կրկին պայթեցվել է հայաստանյան մուտք գործող գազատարը: «Հայգազարդ» արտադրական միավորման պատասխանատուների ասելով, նախօրեին արդեն իսկ դադարեցվել էր գազի հոսքը դեպի Հայաստան: Վրացական կողմը պատճառաբանել էր, թե ստացվող գազի ճնշակը չի անցել 10 մլն խմ-ից: Թեեւ ինչպես տեղեկացանք հավաստի աղբյուրներից, գազատարը փակելու պահին Վրաստան է մուտք գործել 10,5 մլն խմ գազ, իսկ պայթեցնելու պահին ընդամենը, 8,5 մլն խմ: Պատասխանատուների համաձայն, Վրաստանը 1,5-2 մլն խմ գազ պետք է ուղարկեր մեզ 12 մլն խմ ստանալու դեպքում: Ըստ Հայաստանի կառավարության մամուլի ծառայության տեղեկատվության, վթարի վայր են մեկնել հայ մասնագետները: «Հայգազարդի» մի պատասխանատուի ասելով, դա 1994-ի 1-ին պայթեցումն էր, իսկ 1993-ի ընթացքում եղել է գազատարի 12 պայթեցում: Փետրվարի 10-ի պայթեցման մասին վրացիները Հայաստանի իշխանություններին հայտնել են միայն 11-ի առավոտյան: Ակնհայտ է, որ Վրաստանի պետական այրերի կողմից իրականացվող նման խաղախաղությունը օրեցօր դառնում է անհանդուրժելի: Եվ եթե մինչեւ օրս այդ պայթեցումները ինչ-որ տեղ վերագրվում էին ադրբեջանաբնակ Մառնեուլի շրջանին, ապա հետեւելով դրանց հաճախականությանը, կարող ենք միանշանակորեն ասել, թե դրանք վերահսկվում են նաեւ Վրաստանում առկա որոշ ուժերի կողմից: Այլապես ինչով բացատրել, որ ուղիղ մեկ տարի առաջ 1993 թվականի փետրվարի 11-ին, 4:30 րոպեին Քիրաջ Սուգալո գյուղում պայթեցվել է նույն գազատարի մեկ այլ հատված: Չէ՞ինք ցանկանա արձանագրել, թե վրացական իշխանությունները որոշել են պայթյունների տարեդարձները նշանավորել նոր պայթյուններով: Արդարացումներն իսկ արդեն անընդունելի են: Որովհետեւ անցած մեկ տարվա ընթացքում Հայաստանը առաջարկեց եւ՝ գազատարի հատատեղվերակառուցման տարբերակը, եւ՝ գազի փոխարեն ժամանակավորապես ներկրվեց մազութ, եւ միջազգային հանրությանն սպիտեց, որպեսզի էդուարդ Շեւարդնաձեն Բուսրոս Ղալիին ուղարկած նամակում խոստանա հարգել Հայաստանի հետ կնքած բոլոր պայմանագրերը, իսկ իրականում, գազապայթեցման սցենարը կրկնվում է: Նույնիսկ Վրաստանի խորհրդարանում հնչող այն գնդեպքերը, թե պետք է անվստահություն հայտնել կառավարությանը, եւ նոր կառավարություն կազմել, իրականում ոչ մի ազդեցություն չեն կարող թողնել մեզ հուզող հարցերի վրա, քանի որ փորձը ցույց է տալիս, որ Վրաստանում կառավարությունները փոխվում են, բայց գազամատակարարման նկատմամբ ունեցած վերաբերմունքը մնում է նույնը:

Երեկ Վրաստանի խորհրդարանում սկսված քննարկումների ժամանակ ընդդիմության ներկայացուցիչները հանդես են եկել Օբար Պացացիայի կողմից առաջարկված վարչատնտեսական համակարգի վերականգնման դեմ: Փոխարենը ֆինանսաբյուջետային հանձնաժողովի նախագահը հանդես է եկել տնտեսական բարեփոխումների օգտին եւ նշել է, թե պետք է վերականգնել կտրված տնտեսական կապերը նախկին խորհրդային միության հանրապետությունների հետ: Հեստատիր է, թե ինչպես է Վրաստանը մտադիր վերականգնել այդ կապերը, եթե Հայաստանի հետ հարաբերություններում արդեն իսկ ձեռք է բերել անվստահելի գործընկերոջ համբավ:

ՀԱՍՆԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ԼՈՆԴՈՆ

Ավարտվեց ՀՀ նախագահի այցը Մեծ Բրիտանիա

ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Հատուկ թղթակից

ԼՈՆԴՈՆ, 11 ՓԵՏՐՎԱՐ: Այսօր նախագահ Տեր-Պետրոսյանի չորսօրյա այցի վերջին օրն է Մեծ Բրիտանիա: Առավոտյան նա այցելեց Եվրոպայի հին եւ հռչակավոր կրթական հաստատություններից մեկը Քեմբրիջի համալսարան: 110 կմ Լոնդոնից հյուսիս-արեւելք, որ շրջեց համալսարանի ֆուլեջներով, հանդիպեց դրանց ղեկավարների եւ ակադեմիկոսների հետ: Կեսօրից հետո նախագահը վերադառնում է Լոնդոն, երեկոյան Ս. Պետրոս հայկական եկեղեցում կիանդիպի հայ համայնքի հետ եւ հանդես կգա ճառով:

Մինչ այդ, երեկ նախագահը հանդիպեց Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի նախագահ Ժակ դը Լարոզիերին, որի հետ ճաշի ընթացքում քննարկվեցին հարցեր: Մանրամասնություններ առայժմ հայտնի չեն: Ասենք, որ ՎԶԵԲ-ը հիմնադրվել է 1991 թ. աորիկին եւ իր մեջ միավորում է 57 անդամ երկիր եւ երկու հաստատություն EEC, EIB, որոնցից 25-ը Արեւելյան Եվրոպայի եւ նախկին խորհրդային

անցման, վերակառուցման եւ սեփականաշնորհման, նոր հիմնադրամների ստեղծման, ֆինանսական հաստատությունների ամրապնդման եւ տեղական մասնավոր սեկտորի զարգացման: Անցյալ աորիկին ՎԶԵԲ-ի փոխնախագահ Մարիո Սարսինելլին եւ ՀՀ Էներգետիկայի նախարար Սեդրակ Թաշճյանը ոլորտանագիր ստորագրեցին, որով 60 մլն դոլար էր հատկացվում Հրազդանի ՊՇԷԿ-ի վերակառուցմանը:

Երեկոյան նախագահը եւ տիկ. Լյուդմիլա Տեր-Պետրոսյանը այցելեցին Քովրնս Գարդեն Լոնդոնի բարգավաճական օղերա, որ աշխարհի ամենահայտնի երաժշտական կենտրոններից է: Ներկայացվում էր Բենջամին Բրիտենի «Գլորիանան»:

Այսօր դեռեւս մեզ չհաջողվեց այցի հիմնական արդյունքների մասին մանրամասներ ստանալ: ՀՀ նախագահի խոսնակ Լեւոն Զուրաբյանը զուսպ էր արտահայտությունների եւ գնահատականների մեջ: Իրոք, դեռեւս վաղ է ենթադրություններ անել: Նախագահը ինքը նույնպես ոչեռնախաս չէ այդ հարցում: Սակայն դեռեւս ասի սեղմում արտօրինակարար Վահան Փափազյանը լավատես էր, նկատի ունենալով, թե մինչ այդ, անցյալ մայիսին իր եւ վարչապետ Հրանտ Բագրատյանի Բրիտանիա այցի ընթացքում ստորագրված փաստաթղթերը, թե Լոնդոնի հայկական դեսպանատան նախաձեռնատարական աշխատանքները: Կարեւորը, ասում էր Վահան Փափազյանը, երկու կողմերի կողմնորոշված պատկերացումների փոփոխումն է, նախապատարումների հարթահարումը, որ հիմք կդառնան առավել գործնական հարաբերությունների: Արտգործնախարարը հատուկ նշանակություն էր տալիս նախագահ Տեր-Պետրոսյանի "հանդիպական" ունակությունը բացելու փակ դռները: Համենայն դեպս, երեկ նախագահը հայտարարեց, թե հույս կա, որ Ջոն Մեյջորի մոսկովյան այցելության ժամանակ Մեծ Բրիտանիան ավելի ակտիվ դիրք կգրավի Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում:

Վաղը առավոտյան հանդիսավոր ոգեկոչությունը Վինեսայի վրայով նկատի ունենալով, Հրանտ Բագրատյանը կոչ արեց օգնել Արխազիային վերսկսված ռազմական գործողությունների դադարեցմանը: Վարչապետ Օբար Պացացիան ՄԱԿ-ի ներկայացուցիչներին հայտարարեց, որ վերջին մի քանի օրերին արխազ անջատականները 60 գրացիների են սպանել սահմանամերձ Գալիի շրջանում: Նրա խոսքերով, այդ շրջանից արտաքսվել է ավելի քան 3000 մարդ: Թբիլիսիում դիվանագետները հաղորդում են, որ Ռուսաստանը պատրաստում է անհապաղ ՄԱԿ-ի զինվորական դիտորդներ Գալի գործուղելու Վրաստանի խնդրանքը: Վրաստանի կառավարության համաձայն, Գալիում մարտնչում են արխազ անջատականներ եւ վրացի աշխարհազորայիններ, որոնք դուրս են Թբիլիսիի վերահսկողությունից:

Միաժամանակ, Էդուարդ Շեւարդնաձեն եւ Բորիս Ելցինը ՄԱԿ-ին կոչ են արել Արխազիա ուղարկել խաղաղարար ուժեր: Հոկտեմբերի օրը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հղած համատեղ ուղերձում նրանք նշել են, որ Արխազիայի հակամարտությունն իրական սպառնալիք է շրջանային եւ միջազգային խաղաղության անվտանգության համար: Նրանք կրկին առաջարկում են, մինչ ժամանակներս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում քննության առնել ՄԱԿ-ի կողմից կամ նրա հավանությամբ խաղաղարար գործողություն անցկացնելու հարցը, որն անհրաժեշտության դեպքում կինվեր ռուսական զորաբաժնի վրա: Ուղերձում նաեւ նշվում է ճգնաժամի գոտում ՄԱԿ-ի եւ միջազգային դիտորդների ներկայության ընդլայնման անհրաժեշտությունը: ■

ՀԱՄԱՌՈՏ

Սոլժենիցինը Ժիրինովսկուն ծաղրածու է անվանում

Ամերիկյան հայտնի The New Yorker շաբաթաթերթին տված հարցազրույցի ընթացքում ռուս վստահելի գրող Սոլժենիցինը ազգայնամոլ ղեկավար Ժիրինովսկուն «ծաղրածու» է անվանել եւ հույս հայտնել, որ գարնանը Ռուսաստան վերադառնալով ինքը կկարողանա ռուսներին ուղղություն տալ բարոյական կողմնորոշման հարցում: Նա Բորիս Ելցինին քննադատել է այն բանի համար, որ նա մոռացության է տվել նախկին Խ. Միությունում ապրող ռուսներին եւ տնտեսական բարեփոխումների ծրագիրը ամբողջովին փչացրել է: Ընտրություններին Ժիրինովսկու հաղթանակը նա բացատրել է պարզապես Ելցինի դանդաղ քաղաքականության դեմ բողոքելու արտահայտություն: «Ներկա քաղաքականության նկատմամբ Ժիրինովսկու քննադատական ելույթներն են, որ նրան առաջնորդեցին այդքան շատ քվեներ», ասել է նա:

Ամերիկան առկախում է բանակցությունները

Քլինթոնի եւ Հոսոկավայի միջեւ ակնկալվող գագաթաժողովի նախօրյակին ամերիկյան կողմը հանկարծակի առկախել է առեւտրական բանակցությունները Ճապոնիայի հետ: Առեւտրի ներկայացուցիչ Կանդորը նման քայլը բացատրում է նրանով, որ ամերիկյան կողմը դժգոհ է բանակցությունների ընթացքից եւ գտնում է, որ անհրաժեշտ է ճնշում բանեցնել Տոկիոյի վրա զիջումներ կատարելու համար: Ճապոնիայի արտգործնախարար Հաթան հանդիպում է ունեցել ամերիկյան պատասխանատուների հետ, տարաձայնությունները հարթելու եւ համաձայնության եզրեր գտնելու համար: ■

ՎՐԱՍՏԱՆ

Գիմում ՄԱԿ-ին եւ Ռուսաստանին

ԹԲԻԼԻՍԻ, 10 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՎՈՍՏԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒ: Վրաստանի կառավարությունը ՄԱԿ-ին եւ Ռուսաստանին կոչ արեց օգնել Արխազիայում վերսկսված ռազմական գործողությունների դադարեցմանը: Վարչապետ Օբար Պացացիան ՄԱԿ-ի ներկայացուցիչներին հայտարարեց, որ վերջին մի քանի օրերին արխազ անջատականները 60 գրացիների են սպանել սահմանամերձ Գալիի շրջանում: Նրա խոսքերով, այդ շրջանից արտաքսվել է ավելի քան 3000 մարդ: Թբիլիսիում դիվանագետները հաղորդում են, որ Ռուսաստանը պատրաստում է անհապաղ ՄԱԿ-ի զինվորական դիտորդներ Գալի գործուղելու Վրաստանի խնդրանքը: Վրաստանի կառավարության համաձայն, Գալիում մարտնչում են արխազ անջատականներ եւ վրացի աշխարհազորայիններ, որոնք դուրս են Թբիլիսիի վերահսկողությունից:

Միաժամանակ, Էդուարդ Շեւարդնաձեն եւ Բորիս Ելցինը ՄԱԿ-ին կոչ են արել Արխազիա ուղարկել խաղաղարար ուժեր: Հոկտեմբերի օրը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հղած համատեղ ուղերձում նրանք նշել են, որ Արխազիայի հակամարտությունն իրական սպառնալիք է շրջանային եւ միջազգային խաղաղության անվտանգության համար: Նրանք կրկին առաջարկում են, մինչ ժամանակներս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում քննության առնել ՄԱԿ-ի կողմից կամ նրա հավանությամբ խաղաղարար գործողություն անցկացնելու հարցը, որն անհրաժեշտության դեպքում կինվեր ռուսական զորաբաժնի վրա: Ուղերձում նաեւ նշվում է ճգնաժամի գոտում ՄԱԿ-ի եւ միջազգային դիտորդների ներկայության ընդլայնման անհրաժեշտությունը: ■

ԹՈՒՐՔԻԱ

Ադրբեջանը հույսը դնում է իր բանակի վրա

Թուրքիայում գտնվելու առաջին երկու օրվա ընթացքում Հեյդար Ալիեւը հանդիպումներ ունեցավ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի, վարչապետ Թանսու Չիլլերի, խորհրդարանի նախագահ Հիսամեդդին Ջինդորուքի, տարբեր կուսակցությունների եւ շարժումների ղեկավարների հետ: Այդ մասին հաղորդում է Թուրան-Սնարքը. նշելով, թե նախօրյակին Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելն ընդունելություն էր կազմակերպել Հեյդար Ալիեւի պատվին: Ելույթ ունենալով ընդունելության ժամանակ, Հեյդար Ալիեւը բարձր գնահատեց Թուրքիայի դերը Ադրբեջանի, որպես անկախ պետության, կայացման գործում: «Մեր ժողովուրդը երբեք չի մոռանա այդ ցանցերը, որ գործադրեցին Թուրքիան, նրա ժողովուրդը եւ նրա ղեկավարները համաշխարհային հանրակցության կողմից Ադրբեջանի ճանաչման համար», ընդգծեց նախագահ Ալիեւը: Նա նաեւ հայտարարեց, որ Ադրբեջանը երբեք չի հաշտվի իր հողերի օկուպացման փաստի հետ: «Մենք բոլոր ուժերը կգործադրենք, որ հասնենք զավթված հողերի ազատագրմանը: Մեր նպատակն է վերականգնել երկրի տարածքային ամբողջականությունը, առյահովել նրա ինքնիշխանությունը: Մեր հաջողությունների երաշխիքը ադրբեջանցի ժողովրդի հերոսական ավանդույթներն են», ընդգծեց Հեյդար Ալիեւը:

Ըստ Անադոլու-Նոյյան Տաղանի, Ջինդորուքի հետ հանդիպման ժամանակ Ալիեւը նրան ընծայեց գորգ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Աթաթուրքի պատկերով: Պատգամավորների առջեւ իր ելույթում Հեյդար Ալիեւն ընդգծեց, որ Ադրբեջանը կշարունակի անկախ զարգացման եւ ժողովրդավարական բարեփոխումների քաղաքականությունը: Նա ասաց, որ Ադրբեջանը դարձյալ հանդես է գալիս Ղարաբաղի խնդիրը ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի եւ մյուս միջազգային կազմակերպությունների շրջանակներում լուծելու օգտին: Ադրբեջանը հույսը դնում է իր բանակի վրա եւ երբեք չի կորցնի անկախությունը, ընդգծեց Ալիեւը:

Մինչդեռ ըստ Բի-Բի-Սի ռադիոկայանի հաղորդման, «Արտասահմանյան դիտորդները պնդում են, որ հայերի կողմից գրավված տարածքների ազատագրման համար ձեռնարկված Ադրբեջանի հակահարձակումը վատ է կազմակերպված եւ շտապով կազմած էր»:

Ալիեւը Բի-Բի-Սի-ի թղթակցին տված հարցազրույցում խոստովանել է, որ հայերը դրսից ստացած աջակցությամբ կարողացել են որոշ վայրերում հակահարձակման անցնել: Թղթակցի խնդրանքին մեկնաբանել հայկական կողմի այն պնդումները, թե անցյալ տարվա դեկտեմբերից սկսած Ադրբեջանի կողմից զոհվել է 5 հազ. զինվոր, Հեյդար Ալիեւը պատասխանել է (ռուսերեն). «Դա բոլորովին չի համապատասխանում իրականությանը:

Այդ հայերն են աղաղակեցնում համաշխարհային հանրությանը: Դա նրանց հարկավոր է իրենց մարդկանց, ինչպես ասում են, ազգային ոգու տրամադրություն ներշնչելու համար»: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՀԱՅ ԴԱՏ

Բանտարկյալներին ազատելու կոչ

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ-ԱՄՆ-ի, Կանադայի եւ Ֆրանսիայի բանտերում են գտնվում 6 հայ քաղաքական բանտարկյալներ (1982 թ. Լոս Անջելեսում Թուրքիայի գլխավոր հյուպատոսի սպանությամբ ամբաստանված Համբիկ Սասունյանը դատապարտված է ցմահ բանտարկության, 1983 թ. Փարիզի «Օրլի» օդանավակայանում ռումբ պայթեցնելու մեղադրանքով՝ Վարուժան Կարապետյանը, Սիմոն Նահիրյանը դատապարտված են, համապատասխանաբար, ցմահ եւ 15 տարվա շտապանքության, 1985-ին՝ Օսլավայում Թուրքիայի հյուպատոսարանը գրոհելու համար՝ Բաֆֆի Թիրիզյանը, Գեւորգ Մարաբյանը, Հովիկ Նուբարյանը, երեքն էլ ցմահ, գործի վերանայման հայց ներկայացնելու իրավունք ունեն միայն 25 տարի անց):

Հայ քաղաքական բանտարկյալների դատապարտությանը կենտրոնական հանձնախումբը ներկայումս սեղագրություններ է հավաքում դիմելու հայ Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանին, ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին, ԱՄՆ-ի Կանադայի եւ աշխարհի բոլոր երկրների մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպություններին ու բոլոր բարի կամքի տեր մարդկանց՝ միջնորդելու հիշյալ հայորդիներին ազատ արձակելու խնդրով:

Այս մասին Նոյյան Տապան գործակալությունը հայտնել հանձնախմբի ներկայացուցիչ Վազգեն Սիսլյանը (ծն. 1956 թ. Բեյրութում, 1981 թ. Փարիզում Թուրքիայի հյուպատոսարանը երեք ընկերների հետ գրավելու մեղադրանքով ազատազրկվել է 7 տարով): Հայորդիների ազատությանը նվիրված վերջին արշավը սկսվել է օրերս, արդեն ստորագրել են 37 կազմակերպություն եւ կազմակերպություն: «Հույս ունենք պետական մարմինների աջակցությունը ստանալ ինչպես երեսդխորհրդի, Գերագույն խորհրդի փոխարարությունների նախագահ Ռաֆայել Պապոյանի, եւ, հանրապետության նախագահի մի քամությամբ», - Մեր գլխավոր նպատակն է մեր բանտարկված հայրենակիցներն ազատություն ստանան եւ վայելեն ժողովրդի հոգատարությունը: Նվազագույն արդյունքը կլինի այն, որ գոնե տղաներն իմանան, որ հոգում են իրենց մասին»:

Հանձնախումբը գործում է նաեւ այլ երկրներում: Նրանց կոչով Հունաստանի խորհրդարանի 75 պատգամավոր, այդ թվում՝ մշակույթի նախարարը, դիմել են Ֆրանսիական իշխանություններին, որպեսզի վերջիններս Սիմոն Նահիրյանին, որը Թուրքիայի քաղաքացի է, ազատ արձակելուն պես չհանձնեն Թուրքիային, որտեղ նրան կախաղան է սպասվում:

ՏԻՆԱՆՍԵՐ

ՀՀ Կենտրոնական բանկի հայտարարությունը

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկից Նոյյան Տապան գործակալությանը հայտնեցին, որ Հանրապետության թերթերը, լրատվության մյուս միջոցները եւ գովազդային գործակալությունները շարունակում են տարածել ամենատարբեր կազմակերպությունների կողմից բնակչությունից ավանդներ ընդունելու գովազդներ:

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը բազմիցս հայտարարել է եւ այժմ էլ կրկին հիշեցնում է, որ բնակչությունից ավանդներ ընդունելու թույլտվություն ունեն միայն հանրապետության տարածքում արտոնագրված բանկերը, այլ կազմակերպությունների (այդ թվում՝ ֆինանսավարկային) բնակչությունից ավանդներ ընդունելու արտոնագիր չեն տրվել եւ դրանց նման գործունեությունը անօրինական է:

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը կրկին նախազգուշացնում է հանրապետության բնակչությանը, որ նման կազմակերպությունների ավանդները անհուսալի են ներդրած դրանց վերադարձելիությունը երաշխավորված չէ: ■

ՊԱՏԵՐԱԶՄ

Ռազմաճակատի գիծը կայունացել է

ԱԲՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Անցյալ շաբաթվա ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում ռազմաճակատի գծի էական փոփոխությունների չհանգեցրին, թեեւ ադրբեջանական բանակը շարունակում էր գրոհները ռազմաճակատի այս կամ այն հատվածում կանգ չառնելով մարդկային վիթխարի կորուստների առաջ: Այսպես, փետրվարի 8-ի վաղ առավոտյան ուժգին հրետանային նախապատրաստությունից հետո ադրբեջանական բանակը փորձեց լուրջ գրոհ ձեռնարկել հյուսիս-արեւելքում՝ Մարտակերտի շրջանի Մաստաղիս եւ Լյուսագյուղերի ուղղությամբ: Սակայն ծավալված կատաղի մարտերի ընթացքում ղարաբաղյան ուժերը լիովին կասեցրին բշնամու գրոհը: Նույն օրը ադրբեջանական 6 ռազմական ինքնաթիռներ մի քանի անգամ խախտեցին ԼՂՀ օդային սահմանը եւ ռմբակոծեցին Մարտակերտի շրջանի խաղաղ բնակավայրերը: Ռազմաճակատի հյուսիս-արեւելքում ադրբեջանական բանակի ճնշման ավելացումը բացատրվում է նրանով, որ Քելբաջարի շրջանի հյուսիսում շրջապատման մեջ հայտնված եւ ոչնչացման վտանգի տակ գտնվող ադրբեջանական խմբավորումը կարելի է օգնության հասնել միայն այդ կողմից, քանի որ Օմարի լեռնանցքի մերձակա նոպասավոր դիրքերը գտնվում են ղարաբաղյան ուժերի հսկողության տակ: Պատերազմ կրելով Մարտակերտի շրջանում ադրբեջանական բանակը փորձեց փոխել հարվածի հիմնական ուղղությունը եւ հաջողություն իսկ 9 տանկի աջակցությամբ լայնածավալ գրոհ սկսեց Ֆիզուլու շրջանի Ասաղի Արդուռահմանլի եւ Կարախան գյուղերի ուղղությամբ: Ծանր մարտերն այստեղ շարունակվեցին երկու օր, որոնց ընթացքում ղարաբաղյան ուժերը լիովին կասեցրին բշնամու գրոհները: Ադրբեջանական բանակի գրոհը ձախողվեց նաեւ Մարտունու շրջանի հյուսիսում Աղբուռուն բարձունքի ուղղությամբ, որտեղ բշնամին նահանջից կրելով կենդանի ուժի մեծ կորուստներ: Եւ այնուամենայնիվ փետրվարի 10-ին մարտական գործողությունները վերսկսվեցին նաեւ Քելբաջարի շրջանի հյուսիսում Օմարի լեռնանցքի ուղղությամբ, որտեղ նույն օրվա ընթացքում հայկական ինքնաթիռ եւ 12 հրետանային կայանք: Ղարաբաղյան բանակին փաստորեն հաջողվեց գոնե այս փուլում ուժասպառ անել բշնամուն: Այն փաստը, որ հակառակորդն այսօր ոչ միայն զինտեխնիկայի, այլեւ կենդանի ուժի խիստ կարիք ունի, հաստատում են նաեւ ներկայումս Ղարաբաղում գտնվող ադրբեջանցի ռազմագերիները, որոնց վկայությամբ ադրբեջանական բանակում դասալքությունը մեծ չափերի է հասնում: Ըստ այդ աղբյուրների, դասալքությունը մեծ է հատկապես ազգությամբ լեզգի զինակոչիկների շարքերում, որոնց մեծ մասը փախչում է Հյուսիսային Կովկաս՝ հիմնականում Դաղստան: Ու թեեւ ադրբեջանական բանակի շարքերում ներկայումս կան օտարերկրյա վարձկաններ (մոտ 2000 աֆղան մոջահեդ, 500 թուրք ռազմական խորհրդատուներ, 1000 նախկին խորհրդային զինվորականներ եւ այլն), ակնհայտ է, որ ներկա փուլում Ադրբեջանն ի վիճակի չի լինի ծանրակշիռ հաջողությունների հասնել ռազմաճակատներում:

Ռազմական գործողությունների ընթացքն անդրադարձել է նաեւ հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ Ադրբեջանի դիրքորոշման վրա: Երբ վերջինս ընդամենը 2 շաբաթ առաջ հայտարարում էր, թե հրադադարի հաստատման միակ նախադայմանը հայկական զորքերի անհապաղ դուրսբերումն է Ադրբեջանի բոլոր գրավյալ տարածքներից, արդեն ռազմական ձախողումներից հետո հայտարարեց, թե դատապարտ է հրադադարի վերաբերյալ համաձայնագիր ստորագրել դատմանով, որ այն ստորագրի ոչ թե Ղարաբաղը, այլ Հայաստանը:

ՀԱԿԻՐԱ

Օգնություն Ղարաբաղին

10 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Օրերս ԼՂՀ-ում էին ՀՀ փախստականների պետական վարչության աշխատակիցները՝ վարչության պետ Վլադիմիր Մովսիսյանի գլխավորությամբ: Նախարարների խորհրդին առընթեր բնակագրված հաղթահարելու եւ մարդասիրական օգնության հարցերով վարչության պետ Լ. Ղուլյանը Նոյյան Տապան գործակալության թղթակցին հայտնել է, որ ժամանած դատվիրակությունը ԼՂՀ ղեկավարությանը տեղյակ է դարձրել իրենց կողմից տրամադրված 5 մլրդ. ռուբլու մասին, որով պետք է գնվի 500 տ ցեմենտ, 250 վառելիք ու այլ ինանյութեր՝ հանրապետության տարածքում անհատական սեկտորի 1000 տան եւ Շուշի քաղաքում պետական սեկտորի 50 բնակարանանոց 2 շենքի վերականգնման համար: ■

ԵՐԵՎԱՆ

Գծի մեջ յուրայիններն են

ՀՀ կառավարության կոլեգիայի նիստերի դահլիճում երեկ լրագրողներին ասուլիսի էին հրավիրել «Երեւանի քաղաքային հեռախոսացանց» արտադրական միավորման տնօրեն Արտակ Շահրամանյանը, ռադիոֆիկացման հանրապետական հանգույցի տնօրեն Ռոբերտ Անանյանը եւ երեւանի կենտրոնական փոստատան տնօրեն Վարդան Վարդանյանը:

Մի բան է պարզ, փոստային առաքումները ժամանակին իրականացնելու, ռադիոհաղորդումների անընդհատության ու հեռախոսակապի անխափան գործն ապահովելու համար հանրապետության իրավասու հաստատությունները վկայակոչում են բավարար ֆինանսներ չունենալը: Համապատասխան տեխնիկական միջոցները բերվում են Ռուսաստանից եւ բավական թանկ արժեն: Փոստային առաքումների համար եւս Ռուսաստանը ռուսական ռուբլի է պահանջում (պայմանագիր է կնքվել Ռուսաստանի հետ, նախապատրաստվում է հայ-ուկրաինականը):

Հեռախոսակապն անցյալ տարվա համեմատությամբ մի փոքր բարվոք վիճակում է: Քաղաքի 15 հեռախոսակայաններ ապահովված են անկախ էներգասնուցմամբ, մյուսների աշխատանքը խափանվում է օրվա մեջ մի քանի ժամով (հոսանքի ցածր հաճախականության դեպքում ապահովիչները շարից դուրս են գալիս):

Բայց կա մի լուրջ խնդիր, քաղաքացիական խիստ հայեցի ինքնագործունեությունն անհերեւակայելի հարաբերություններ է գործում՝ սեփական բնակարանի էլեկտրամատակարարման հարցը հեռախոսակայանների էլեկտրալարերը ոչ ողակի տուն ուղղելով: Ավելին, որպես վառելանյութ տուն են բերվում նաեւ ռադիոկապի հենասյուները, որոնք եւս բանկ արժեն եւ բերվում են Ռուսաստանից: Նույն ճանապարհով անհետանում են նաեւ կաբելների ու լարերի որոշ հատվածներ:

Միայն մի բան պարզ չէ՝ ով է ում գողանում եւ ո՞վ է տեսնում ու չի զարմանում:

Ռ. Խ.

Անհրաժեշտ է օգտակար հանածոների հանքավայրերի մարկետինգ կազմակերպել

ՀՀ ընդերքի պետական վարչության տվյալներով, Հայաստանի օգտակար հանածոների հաշվեկշռում այսօր ավելի 400-ից ավելի հանքավայրեր կայան շահագործվում է մոտավորապես դրա կեսը:

Ինչպես Նոյյան Տապան գործակալության թղթակից Մարինա Երեմյանցին հայտնել է վարչության պետի առաջին տեղակալ Սիմոն Պապոյանը, վարչությունում ստեղծվել է հատուկ խումբ, որն զբաղվելու է չօգտագործվող հանքավայրերի գործարկման նպատակով մարկետինգի եւ գովազդի հարցերով: Դրանցից յուրաքանչյուրը կստանա յուրօրինակ «այցեստոն», որի վրա նշված է լինելու, թե ինչ օգտակար հանածո է պարունակում, ինչ հումք է այդ եւ ինչի համար կարող է օգտագործվել ինչպես նաեւ, թե ում կարող է հետաքրքրել:

Ընդերքի պետական վարչության այս ենթաբաժինը էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ անց է կացնելու, այսպես կոչված, հանքավայրերի բենդերներ, այսինքն մրցույթ-աճուրդներ, որոնց նպատակն է պետական ձեռնարկություններ կամ կազմակերպություններ, ընկերություններ, այդ թվում նաեւ արտասահմանյան, մասնավոր անձինք գտնել, որոնք ցանկություն կունենան զբաղվել դրանց մշակմամբ: Դրա համար վերջիններս պետք է պարզապես արտոնագիր ստանան ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից եւ պայմանագիր կնքեն ընդերքի պետական վարչության հետ: Դրանում մանրամասն պետք է ներկայացվեն երկու կողմերի բոլոր պարտականություններն ու իրավունքները, տնտեսական փոխադարձ պատասխանատվությունը: Այսինքն՝ հարաբերությունների հիմքում դրվում է ոչ թե վարչական, այլ տնտեսական մեխանիզմը:

Սիմոն Պապոյանը նշեց, որ նախկին «Հայերկրաբանություն» արտադրական միավորման վերակառուցումից հետո նորաստեղծ ընդերքի պետվարչությանը հանձնվեցին նաեւ նոր ֆունկցիաներ: Եթե նախկինում երկրաբանական վարչությունն զբաղվում էր զուտ երկրաբանական հետախուզական աշխատանքներով՝ օգտակար հանածոների որոնմամբ եւ դրանց հանքավայրերի պարարների գնահատմամբ, իսկ շահագործումը նրանց պակաս չավտով էր հետաքրքրում, այդ այժմ վարչությունը կոչված է հետեւելու նաեւ հանքերի ռացիոնալ օգտագործմանը: Այս ֆունկցիան իրականացնելու է ազդեցության տնտեսական լծակների օգտագործմամբ նոր խնդիրների լուծման համար, ինչպես ասաց Ս. Պապոյանը, իրենց կառուցվածքում արմատական կերպով վերաձեւավորվել է վարչությունում եղած երկրաբանա-վարկեյդերական հսկողության ծառայությունը: Այն անմիջականորեն պետք է հետեւի արդյունահանման գործընթացներին «Քաղդեխիսկության» շրջակա միջավայրի պաշտպանության եւ էկոնոմիկայի նախարարությունների հետ համատեղ վերահսկելով հանքավայրերի շահագործումը: ■

ՈՍՍԿԵՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Գ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 562941, հեռ 243266 CPRU SU
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Ոճը եւ տարածները ՊՈՒԵԼ ԴԱԼԱՔԵԱՆԻ
Apple Macintosh
հանդիսադարձին շարուածը «Ազգ» թերթի
Azg
armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010
Published in U.S.A. by AZG Publishing Co.,
22122 Sherman Way, Suite 203, Canoga Park,
CA 91303, Call (818) 598-0423 Fax:
(818)340-9819 for subscription rates.
Publisher - Հրատարակիչ
Dr. Krikor Krikorian -
Դոկտ. Գրիգոր Գրիգորեան
Executive Director - Տնօրէն
Vartan Karaoghlanian -
Վարդան Գարաօղլանեան
Production Manager -
Raffi Shoubookian
Արտադրութիւն
Ռաֆֆի Նուպուքեան
«ԱԶԳ» օրաթերթը հաղորդվում է ԱՄՆ «ՍԻՊՈՒԿՈ» ՍՊԸ-ի հանձնարարելի կարգով
Հեռախոս. 7-8852-281425,
Թաղ 7-8852-285082
E-MAIL INTERNET: ROOT.
YEREVAN @ REX.IASNET.COM

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Շրջան, ապշ

1992 թվի հոկտեմբերյան ընդհարումներից հետո Հյուսիսային Օսիան եւ Ինգուշիան արտակարգ դրության մեջ են: Սկսած 18-րդ դարից, հզոր պետությունների հետնորդներ՝ օսերը, սեփականեն են համագործակցել ռուսների հետ եւ Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մեջ համարվում են «ամենառուսամետները»: Այդ հակամարտության վտխարեն ռուսները, նրանց բարեբեր հողատարածություն ոչարգելելով, նղաստել են, որ նրանք լեռներից ցած հարթավայրերն իջնեն:

Օսերը կամ իրոնները, ինչպես իրենք են իրենց անվանում, միակ քրիստոնյաներն են Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մեջ, չնայած նրանց մի փոքր մասը դավանում է մահմեդականություն:

Ազգայնամոլությունն այստեղ այնքան էլ ուժեղ արտահայտված չէ: 8000 քառ. կմ տարածություն զբաղեցնող եւ 638 հազար բնակիչ ունեցող այս հանրապետությունում օսերը կազմում են բնակչության 50.5 տոկոսը: Երկրորդ մեծ համայնքը ռուսականն է: Դպրոցների մեծամասնությունը ռուսական է: Ոչ մի օսական դպրոց չկա այնտեղ, եւ բացի մեծահասակներից շատ քչերն են օսերեն իմանում:

Հունվարի 16-ին նախագահ ընտրվելուց հետո, Գալազովն իր անդրանիկ ելույթի ժամանակ մեծ նշանակություն տվեց ազգային հարցին, ընդգծելով, որ Հյուսիսային Օսիան բաղկացած ոչ-հետությունն է եւ այդպիսի մնալու է: «Նաբա Օսեթիա» կոչվող կազմակերպությունն իր մեջ ներառում է հանրապետությունում ապրող տարբեր ազգություններին եւ նրա նախագահ Վլադիմիր Լազկուեւը պատմեց, թե ինչպես էին իրենք, իշխանությունների հետ միասին, դատապարտում վրացիների անվտանգությունը Հարավային Օսիայում բռնկված պատերազմի օրերին, երբ փախստականները փորձում էին երկրից դուրս վռնդել վրացիներին եւ գրաղեցնել նրանց տները: Վլադիկավկազի վրացական համայնքի նախկին առաջնորդ Ալեքսեյ Բուչուրին նշեց, որ այժմ հարգում ապրում են 8.500 վրացիներ, եւ որ վրացական դպրոցը, հակառակ ամեն ինչի, ոչ մի օր չի փակվել:

Ինգուշական հարցն արծարծել նշանակում է օսերի ընդհանումների սահմանն անցնել: «Սեւերնայա Օսեթիա» պատմաբերի լրագրող Վալենտինա Զիգինան ինգուշներին է մեղադրում Քաղամամերձ շրջանի եւ Վլադիկավկազի արեւելյան թեւի (Թերեք գետից) նկատմամբ աշխարհագրական սանձագրծելու համար: 1992 թ. հոկտեմբերի 30-ին եւ հաջորդող 3-4 օրերին կատաղի մարտեր են տեղի ունեցել օսերի եւ ինգուշների միջեւ, մինչեւ որ ռուսական զորքերը միջամտել են: Բայց արդեն հարյուրավոր մարդիկ սպանված են եղել: Վլադիկավկազում դեռ կարելի է տեսնել հրդեհված դարձած ինգուշների տները: Օսական ապրանքների հանձնաժողովի 32 հազար ինգուշ փախստականներ կան այժմ. մինչդեռ, թե ինգուշական ապրանքների, այդ թիվն անցնում է 60 հազարից:

Ինգուշները դատապարտում են այսպես կոչված «դատված ժողովուրդների» բարկին, որոնք 1944 թվականին Ստալինի կողմից «բռնանում հետ հանագործակցելու համար»: Երբ նրանք 1957 թվին վերադարձան աքսորից, նրանց գյուղերից մի հանիսը բնակեցված էին օսերով եւ ռուսներով, իսկ Քաղամամերձ շրջանը դարձյալ «դուրս էր մնացել» Չեչենա-Ինգուշական Իմքնավար Հանրապետության սահմաններից: Ռուսաստանի խորհրդարանը 1991 թվի ապրիլին մի օրենք ընդունեց, հաստատելով, որ պետք է «Ճնշված ժողովրդի» իրավունքները վերականգնվեին եւ նրանց պետք է վերադարձվեին իրենց նախկին տարածքները: Օրենքի 6-րդ հոդվածը այդպիսով հակադրվում էր հանրապետության ներկա իրավական սահմաններին եւ ենթադրում էր փոփոխություններ մտցնել դրանում: Մինչ չեչենները (որոնք ծագումնաբանական տեսակետից ցեղակից են ինգուշներին) Խորհրդային Միության փլուզումից հետո անկախություն հռչակեցին եւ առանձնացան Ռուսաստանի Դաշնությունից, ինգուշները, հոչակելով հանդերձ իրենց սեփական հանրապետությունը, մինչեւ օրս չեն կարողանում հասնել ճշգրտված սահմանների հաստատմանը: Հակառակ որ Քաղամամերձ շրջանի հարցում, ռուսական օրենքն իրենց կողմն է, ինգուշները չեն կարողանում հասկանալ, թե ինչու ռուսական խորհրդարան զորքերն այդ օրերին, օսերի կողմը բռնելով, սկսեցին կրակ բացել ինգուշ մարդիկների եւ գյուղերի վրա:

Վլադիկավկազը շատ նեղ մի շերտով է կարվում հանրապետության երկրորդ մեծ քաղաքի՝ Մոզդոկի հետ: Այդ նեղ շերտի վրա հիմնականում ինգուշական գյուղեր են, որոնք այժմ ռուսական բանակի խիստ հսկողության տակ են: Հակառակ ձեռք առնված բոլոր միջոցներին, երկու համայնքների միջեւ բռնարարքները սովորական երեւույթ են եւ միայն ծծռան դատաստանով է, որ դրանք մի փոքր նվազել են: Մոզդոկ գնալու համար վարորդները սովորաբար խուսափում են այդ ճանապարհից եւ նախընտրում առավել երկար ճանապարհը՝ հարեւան Կաբարդինա-Բալկարական ԻՍՍՀ-ի միջով: Ըստ մեր տվյալների, արդեն երկու տարի է, ինչ ՌՍՖՍՀ-ի մաս կազմող այդ երկու հանրապետությունների սահմանին գոյություն ունեն ինքնապաշտպանության ստորաբաժանումներ:

Մոզդոկի շրջանը Հյուսիսային Օսիային է տվել երկրորդ համաշխարհային դատարանից հետո: Քաղաքը չափազանց խառը բնակչություն ունի եւ ճաշկերույթների ժամանակ մինչեւ օրս էլ դեռ կարելի է տեսնել օսերի, ռուսների, հայերի, կարեացիների բարքերի, ինգուշների, չեչենների եւ ոչիրների: Ինգուշներին այդտեղից դուրս չեն վտարել, ինչպես մայրաքաղաքում: Ինգուշ մի բժիշկ ասաց, որ հակամարտության սկզբնական փուլում ճնշումն իրենց վրա շատ ուժեղ էր, բայց հետագայում եւ այժմ դրությունն ավելի լավ է, չնայած դեռեւս նրանցից շատերը զորանոցում են եւ կցերազասնին ոգորել մեկ ոչիշ վայրում:

Լարվածությունը դա նաեւ հրապիրված է նրանց: Հարավցիները չեն կարողանում հաշտվել «Վրաստանի կազմում ինքնավարություն» ունենալու փոխզիջումային իրավիճակի հետ եւ դատանոցում են կամ միություն Հյուսիսային Օսիայի հետ կամ անկախություն Ռուսաստանի Դաշնության կազմում: Հյուսիսային Օսիայի քաղաքացիները համամիտ չեն այս տեսակետին: «Միության հռչակումը կնշանակի անվերջանալի մի դատերազմ հայտարարել Վրաստանին, ասում է Զիգինան, իսկ մյուս կողմից Մոսկվան դեմ է ամեն տեսակի սահմանային վերափոխումների»:

Միայն Կովկասում դատարանված գրանցված են սահմանատարածքային փոփոխություններ՝ 33 դատահանջներ: Ցարական Ռուսաստանն ու հետագայում խորհրդային ղեկավարները Կովկասի ժողովուրդներին, չեռներից դատավայրերն իջեցնելով, հեռացնում էին մի նոդատեղ, ավելի հեշտորեն կառավարել նրանց: Դրանից էլ առաջացել է էթնիկական բաժանման խայտաբղետ մի վիճակ, որտեղ առանց դատաստանաբանությունների հողատարածություններն անցել են մի ձեռքից մյուսը: Խորհրդային իշխության օրոք, Հյուսիսային Կովկասում սահմաններն առնվազն 36 անգամ վերանայվել են: Տնտեսական վերակազմակերպումների ներկա փուլում, հողի սեփականաշնորհման ակտը խիստ «դատարանական» միջոցառում է, որը կարող է առաջնորդել նոր սահմանների ստեղծմանը, ինչպես տարբեր հանրապետությունների միջեւ, այնպես էլ յուրաքանչյուր հանրապետության ներսում:

ԿՈՎԿԱՍ

Հյուսիսային Օսիան հրաբխային վիճակում

Վիգեն Չթրյան

Հանրապետության սահմաններից: Ռուսաստանի խորհրդարանը 1991 թվի ապրիլին մի օրենք ընդունեց, հստակայն որի, որտեղ է «Ճնշված ժողովրդի» իրավունքները վերականգնվեին եւ նրանց պետք է վերադարձվեին իրենց նախկին տարածքները: Օրենքի 6-րդ հոդվածը այդպիսով հակադրվում էր հանրապետության ներկա իրավական սահմաններին եւ ենթադրում էր փոփոխություններ մտցնել դրանում: Մինչ չեչենները (որոնք ծագումնաբանական տեսակետից ցեղակից են ինգուշներին) Խորհրդային Միության փլուզումից հետո անկախություն հռչակեցին եւ առանձնացան Ռուսաստանի Դաշնությունից, ինգուշները, հռչակելով հանդերձ իրենց սեփական հանրապետությունը, մինչեւ օրս չեն կարողանում հասնել ճշգրտված սահմանների հաստատմանը: Հակառակ որ Քաղամամերձ շրջանի հարցում, ռուսական օրենքն իրենց կողմն է, ինգուշները չեն կարողանում հասկանալ, թե ինչու ռուսական խորհրդարան զորքերն այդ օրերին, օսերի կողմը բռնելով, սկսեցին կրակ բացել ինգուշ մարդիկների եւ գյուղերի վրա:

Վլադիկավկազը շատ նեղ մի շերտով է կարվում հանրապետության երկրորդ մեծ քաղաքի՝ Մոզդոկի հետ: Այդ նեղ շերտի վրա հիմնականում ինգուշական գյուղեր են, որոնք այժմ ռուսական բանակի խիստ հսկողության տակ են: Հակառակ ձեռք առնված բոլոր միջոցներին, երկու համայնքների միջեւ բռնարարքները սովորական երեւույթ են եւ միայն ծծռան դատաստանով է, որ դրանք մի փոքր նվազել են: Մոզդոկ գնալու համար վարորդները սովորաբար խուսափում են այդ ճանապարհից եւ նախընտրում առավել երկար ճանապարհը՝ հարեւան Կաբարդինա-Բալկարական ԻՍՍՀ-ի միջով: Ըստ մեր տվյալների, արդեն երկու տարի է, ինչ ՌՍՖՍՀ-ի մաս կազմող այդ երկու հանրապետությունների սահմանին գոյություն ունեն ինքնապաշտպանության ստորաբաժանումներ:

Մոզդոկի շրջանը Հյուսիսային Օսիային է տվել երկրորդ համաշխարհային դատարանից հետո: Քաղաքը չափազանց խառը բնակչություն ունի եւ ճաշկերույթների ժամանակ մինչեւ օրս էլ դեռ կարելի է տեսնել օսերի, ռուսների, հայերի, կարեացիների բարքերի, ինգուշների, չեչենների եւ ոչիրների: Ինգուշներին այդտեղից դուրս չեն վտարել, ինչպես մայրաքաղաքում: Ինգուշ մի բժիշկ ասաց, որ հակամարտության սկզբնական փուլում ճնշումն իրենց վրա շատ ուժեղ էր, բայց հետագայում եւ այժմ դրությունն ավելի լավ է, չնայած դեռեւս նրանցից շատերը զորանոցում են եւ կցերազասնին ոգորել մեկ ոչիշ վայրում:

Լարվածությունը դա նաեւ հրապիրված է նրանց: Հարավցիները չեն կարողանում հաշտվել «Վրաստանի կազմում ինքնավարություն» ունենալու փոխզիջումային իրավիճակի հետ եւ դատանոցում են կամ միություն Հյուսիսային Օսիայի հետ կամ անկախություն Ռուսաստանի Դաշնության կազմում: Հյուսիսային Օսիայի քաղաքացիները համամիտ չեն այս տեսակետին: «Միության հռչակումը կնշանակի անվերջանալի մի դատերազմ հայտարարել Վրաստանին, ասում է Զիգինան, իսկ մյուս կողմից Մոսկվան դեմ է ամեն տեսակի սահմանային վերափոխումների»:

Միայն Կովկասում դատարանված գրանցված են սահմանատարածքային փոփոխություններ՝ 33 դատահանջներ: Ցարական Ռուսաստանն ու հետագայում խորհրդային ղեկավարները Կովկասի ժողովուրդներին, չեռներից դատավայրերն իջեցնելով, հեռացնում էին մի նոդատեղ, ավելի հեշտորեն կառավարել նրանց: Դրանից էլ առաջացել է էթնիկական բաժանման խայտաբղետ մի վիճակ, որտեղ առանց դատաստանաբանությունների հողատարածություններն անցել են մի ձեռքից մյուսը: Խորհրդային իշխության օրոք, Հյուսիսային Կովկասում սահմաններն առնվազն 36 անգամ վերանայվել են: Տնտեսական վերակազմակերպումների ներկա փուլում, հողի սեփականաշնորհման ակտը խիստ «դատարանական» միջոցառում է, որը կարող է առաջնորդել նոր սահմանների ստեղծմանը, ինչպես տարբեր հանրապետությունների միջեւ, այնպես էլ յուրաքանչյուր հանրապետության ներսում:

ՀԱԿԻՐՄ

Շեւարդնաձեն հույս է դնում Ռուսաստան-Վրաստան դայմանագրի վրա

ԹԲԻԼԻՍԻ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ- Ոչ մի երկիր ի վիճակի չէ Վրաստանի համար անել այն, ինչ կարող է անել Ռուսաստանը: Բորիս Ելցինի այցը եւ Թբիլիսիում ստորագրված ռուս-վրացական համաձայնագրերը պետք է համարվեն հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի մեծագույն իրադարձությունը, հայտարարեց Վրաստանի ղեկավար էդուարդ Շեւարդնաձեն՝ փետրվարի 10-ին ելույթ ունենալով երկրի խորհրդարանում: «Ստորագրված դայմանագիրն ունի իր մութ ու լուսավոր կողմերը, բայց մենք պետք է նկատի առնենք, որ նոր փաստաթղթի իրացումով վերջ կդրվի Վրաստանի քաղաքական ու տնտեսական մեկուսացմանը», ընդգծեց Շեւարդնաձեն:

Հանրապետության ղեկավարը նկատեց, որ երկու հարյուրամյակ Վրաստանի տնտեսությունն անխզելիորեն կապված է եղել Ռուսաստանի հետ, ուստի տնտեսական ճգնաժամից Վրաստանը դուրս բերելու համար անհրաժեշտ է, որ վերականգնվեն կորսված կապերը Մոսկվայի հետ:

Անդրադառնալով Վրաստանում ռուսական զորքերի գտնվելու հարցին, Շեւարդնաձեն նշեց, որ «չկա մի այնպիսի երկիր, որը ողջուներ օտար զորքերի գտնվելն իր հողում»: Բայց, Վրաստանի ղեկավարի խոսքերով ասած, հանրապետության ղեկավարությունը գնաց այդ փոխզիջմանը, դա համարելով անհրաժեշտություն, քանի որ Ռուսաստանի բանակը կօգնի ստեղծելու վրացական ազգային բանակ:

Կալինինգրադը վիճարկման առարկա

ՄՈՍԿՎԱ, 10 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ- Կալինինգրադի շրջանը Մոսկվայի նկատմամբ հատուկ ինքնավար կարգավիճակով «եվրոպական միջնատարածք» դարձնելու գաղափար արտահայտվեց Եվրախորհրդարանում, որն ընդունեց գերմանացի պատգամավոր Մագդալինա Հոֆի՝ այդ բնույթի նվիրված զեկուցագիրը: Ստրասբուրգից այդ մասին հաղորդում ստացվեց Ռուսաստանի լրատվական գործակալությունում:

«Նմանօրինակ առաջարկությունները նոր չեն, ասաց Ռուսաստանի ԱԳՆ ավագ խորհրդական Գորալդ Գորինովիչը: Արեւմուտքում ժամանակ առ ժամանակ տարբեր խմբավորումներ անում են Կալինինգրադի շրջանը «եվրոպականացնելու», «ինքնավար դարձնելու», «հանրապետություն դարձնելու» առաջարկություններ: Այստեղ հասկանալի է, գործում ԳԴՀ-ն: Մենք այդ ծրագիրը մերժում ենք, քանի որ դրանց հետեւում թաքնված են Կալինինգրադի մարզը Ռուսաստանից անջատելու հավակնություններ», ասաց դիվանագետը: Ընդգծելով, որ մարզը Ռուսաստանի անկապտելի մասն է, Գորինովիչը նշեց, որ Կալինինգրադի շրջանը «լայնորեն բաց է Արեւմուտքի հետ գործակցության համար»:

1991 թ.-ից այնտեղ գործում է «Սաբ» ազատ տնտեսական գոտին, որը հենց նախատեսված է արտաքին աշխարհի հետ ամենաակտիվ համագործակցության համար, ասաց Գորինովիչը:

Լոգովոյը չի նպաստում իրադրության կայունացմանը

ՆԱԶՐԱՆ, 10 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ- Ինգուշ ժողովրդի Ավագների խորհուրդը դատապարտեց Ինգուշիայի նախագահ Ռուսլան Աուշեւի հայտարարությունը Հյուսիսային Օսիայի եւ Ինգուշիայի տարածքներում ժամանակավոր վարչակազմի ղեկավար Վլադիմիր Լոգովոյին անվստահություն հայտնելու վերաբերյալ:

Ավագների խորհրդի Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին ուղղված դիմումի մեջ նշվում է, որ Լոգովոյի գործունեությունը ոչ միայն չի նպաստում շրջանի իրադրության կայունացմանը, այլեւ հանգեցնում է ինգուշների եւ օսերի նոր հակամարտության: Ավագների կարծիքով, ժամանակավոր վարչակազմի ղեկավարը փաստորեն խոչընդոտում է ինգուշ գաղթականների Հյուսիսային Օսիայի Քաղամամերձ շրջան վերադառնալուն:

Փաստաթղթով նաեւ դաշնակցային իշխանություններից պահանջվում է փոփոխություններ չկատարել «Հալածված ժողովուրդների արդարացման մասին» օրենքի 3-րդ ու 6-րդ հոդվածներում, որոնցում խոսվում է ստալինյան հալածանքների տարիներին տուժած ժողովուրդների տարածքային վերականգնման մասին: ■

ՄՈՍԿՎԱ

Գերասիմենկոյի եւ Եգոր Գայդարի ելույթները Ռուսաստանի ֆերմերների համագումարում

ՄՈՍԿՎԱ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ԲԻԶՆԵՍ ՏԱՍՍ- «Ես կաղմնակից եմ բազմակացութաձեւ տնտեսության եւ այն կարծիքին եմ, որ մեր երկրում հնարավոր չի լինա գնալ առանց խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների, ոչ էլ առանց փոքր ֆերմերային տնտեսությունների», հայտարարեց Ռուսաստանի Կենտրոնական դումայան նախագահ Վիկտոր Գերասիմենկոն ելույթ ունենալով Ռուսաստանի ֆերմերների համագումարի դատաստանների եւ հյուրերի առջեւ:

Անդրադառնալով դումայան անցյալ տարվա գործունեությանը, Կենտրոնական դումայան նախագահը ինքնաքննադատորեն խոստովանեց, որ թույլ էին տրվել էական վրիպումներ, որոնք բաղադրիչ ինչպես ֆերմերների, այնպես էլ ամբողջ ագրարդյունաբերական համալիրի տնտեսական վիճակը: Այս տարի, ասաց նա, որոշում է ընդունվել նրանց տարեվերջ գյուղական արտադրողներին բույլ տալ հեռածգելու տոկոսների գանձումը տրամադրված վարկերի դիմաց:

Վիկտոր Գերասիմենկոյի կարծիքով, դա որոշ չափով կդիպչաթափի իրադրությունը գյուղի ֆինանսական ծառի կազմակերպման մեջ: Նա ողջունեց համագումարի այդ դատաստանների, որոնք արտահայտեցին Ռուսաստանում գյուղացիական դատաստաններ ստեղծելու օգտին, եւ իր կողմից խոստացավ հանձնարարել նրանց աջակցություն ու օգնություն:

Ռուսաստանի կառավարության նախկին փոխվարչապետ Եգոր Գայդարն իր ելույթում հարցականի տակ դրեց գյուղում տնտեսավարման բոլոր ձեւերի հավասարության դրույթը, որն այսօր շատ է տարածվում: Նրա կարծիքով, ֆերմերներն պետք է ստանան մեկնարկային դայմաններ բերումով չեն կարող աշխատանքի առաջին տարիներին մրցակցել խոշոր ագրաձեռնարկատերերի հետ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ներկայիս կառավարությունը, ասաց նա, «դետք է մեծ աջակցություն ցույց տա ֆերմերներին», այդ թվում եւ գյուղացիական դրամատների ցանց ստեղծելու առդարեցում: Այստեղ չարժե «դատանեել բանջարանոցը», իր կարծիքն հայտնեց նա. Ռուսաստանում արդեն գոյություն ունի գյուղատնտեսական դրամատան համակարգ: Պետք է միայն ամրապնդել դայմաններ ստեղծել եւ սկզբնական փուլում արտոնություններ տրամադրել գյուղի համար, ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ վարկեր տրամադրելու խնդրում, ասաց Եգոր Գայդարը:

Եգոր Գայդարի կարծիքով, ներկա չլինելով կառավարությունը դետք է շարունակի Ռուսաստանի գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը ազատականացնելու նպատակով սկսված աշխատանքը՝ ստեղծելով հողի շուկայի գոյացման ուղղությամբ: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատարակ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անցումային շրջանը նախկին սովետական հանրապետություններու մէջ

ՄԿՐՏԻՉ Յ. ՊՈՒԼՏՈՒՔԵԱՆ

Եւրոնամայնքի Յանձնաժողովի արտաքին յարաբերութիւններու գլխաւոր վարչութեան Ֆինանսային ծառայութեան խորհրդատու

Կ՚ըսուի թէ այս անգամուան «Կլասնոսը» վերջինն է, այսինքն Մոսկուայի հեղինակութիւնները կը վստահեցնեն 1983էն ի վեր սկսեալ Կորդաչովէն մինչեւ Եելցին, թէ եղածը աղուսեղեկատուութիւն չէ, խորամանկութիւն չէ, դատարան չէ:

Ընթերցողը հարց դիտի տայ անդայման, թէ ասկէ առաջ «Կլասնոսներ» եղա՞ծ են ու անցումային շրջաններ ալ գոյութիւն ունեցա՞ծ այդ:

Երբ կը կարդանք միջազգային մամուլը ու դէմ առ դէմ կու գանք կասկածամիտ լրագրական համակարգին դէպ անոնք Եւրոպայի եւ Ամերիկեան լուսաբանները կամ ճապոնական շրջանակը, որ կը մտածուի թէ այս վերջերուն «Կլասնոսին» է, կ՚ուզենք մենք ալ ձեւանալ կասկածամիտ, կ՚ըսենք ձեւանալ, քանի որ անցումային այս շրջանը ոչ մեր ներկայ սերունդը կ՚ապրի, մօտէն թէ հեռուէն, տեսնելով միմիայն տնտեսական ու ընկերային երկրաչարժը զոր դատարան է Վերակառուցման գաղափարախօսութիւնը «Կլասնոսի» առընթեր, կը հաստատենք որ եղածին մէջ իրականութիւն մը կայ այս անգամ:

Նախ՝ երկու խօսք նախորդ «Կլասնոսներու մասին:

Առաջինը՝ 1921 – Տնտեսական Նոր Քաղաքականութիւնը (ՆԵՔ) որ Լենին կը հոչակէր ասիճանական վերադարձ դէպի շուկայի յարաբերութեանց տնտեսութեան: Այս բացուիլը ուղեղիդ սակայն, կը տեսնէ մինչեւ 1929ը ու ՏՆՔ-ի բոլոր հետքերը կ՚անհետանան այդ տարուան մէջ:

Երկրորդը՝ – 1936-37ի Սովետ Սահմանադրութիւնն է. 30-ական թուականներու կէսերուն, Ստալին կ՚ուզէր վերակառուցել Սովետ տնտեսութիւնը կոմիսարիատ համակարգով: Այս փորձը դժբախտաբար, յանկարծակի ձեւով վերջ կը գտնէ ստալինեան մաքրագործումներով 1937-38ին:

Երրորդը – Համաշխարհային Բ. Պատերազմի շրջանին, երբ հիթլերեան ուժեր կը ներխուժեն Սովետական Միութիւն, Ստալինի դաշինքը Անգլիոյ ու Միացեալ Նահանգներու հետ կը փրկէ Սովետական համակարգը մեծ կորուստ մը ու մենք Եալթայի մէջ կը տեսնենք Պատերազմին յաղթանակներուն ողջագուրումը: Սակայն, Չեխոսլովաքիայի կցումն ու Հիւսիսային Պարսկաստանի ներխուժումը վերջ կու տայ այս փորձին ալ:

Չորրորդը – Առա-ստալինեան շրջանը 1956-59ը կամ Խրուշչեւի ժամանակաշրջանը: Հոս, դարձեալ կոմիսարիատ նշանները՝ ինչպէս մրցակցութիւն՝ տնտեսական բնագաւառի մէջ ու սեփական ինքնավար ձեռնարկներ կ՚արտօնուին գործել: Սակայն այս մէկն ալ կը տեւէ մինչեւ Գուոյայի հրթիռներու տագնապը 1962ին:

Հինգերորդը՝ – Պրէժնեւեան տէրանդի շրջանը 1970-1975, կամ վերակենդանացնում-աշխուժացում Սովետական տնտեսութեան: Այս մէկն ալ կը վիժի Դեկտեմբեր 1979-ի Աֆղանիստանի տագնապով:

Վեցերորդը – Կորդաչեւեան յեղափոխութիւնը 1983էն ասդին:

Աչքէն անցած որ Սովետական Պետութիւնը կը գտնուի անլուծելի դժուարութեան մը առջեւ ըլլայ այդ տնտեսական արդիւնաբերութեանց անկում ու վայրէջք կամ դատերազմական իրավիճակ, միշտ դիմած է խորամանկութեան հաղթականութեան. բնական երեւոյթ է ու խելացի շարժում: Մեր եզրակացութիւնները կը հաղենք վերեւ յիշուած վեց վերակառուցումի-փորձերէն:

Վերյիշեցումի համար թող ըսուի, որ Մոսկուան տակաւին գերդեռութիւն մը կը համարուի իր զինուորական ու հիւլէական համակարգով: Սակայն, այն գաղը զոր տուեցաւ զինուորական արդիւնաբերութեան, իր ժխտական հետեւանքները ունեցաւ տնտեսութեան վրայ՝ Այսպէս՝

ա- Մինչ Միացեալ Նահանգներն ու Եւրոպան իրենց զինուորական արտադրանքներն ու արտադրամասերը վաճառեցին ունեւոր դեռութիւններու ու ստացան դատարաս դրամ, Սովետական Միութիւնը վաճառեց վարկով երրորդ աշխարհի դեռութեանց: Այսօր վերջինները կը դարձին 142 միլիարդ տոլար Ռուսիոյ ու այդ գումարները զանձելը եղած է դժուար եթէ ոչ անկարելի: Իրաւ է որ գոյութիւն ունէր երկաթէ վարագոյր մը. սակայն արբանեակներու, ու մանաւանդ լրտես արբանեակներու ներկայութիւնը այսօր անջրդեսի մէջ, հոդաշերծած է ու երեւան կը հանէ որեւէ գաղտնի խնդիր երկուսեմ:

բ- Տնտեսութեան նեցուկ կանգնելու հաղթականութիւնը, ունի իր օգտաբաս, հետեւանքներ իր սկզբնական շրջանին. սակայն, երբ այս մէկը շարունակուի, յառաջ կը բերէ արդիւնաբեր տարին անտարբերութիւնը, դատեհադաբերութիւնը, ծուլութիւնն ու մսխումը: Որոշ առդիւնք ընդհանուր անկում տնտեսական արդիւնաբերութեանց:

գ- Երբ ձեռնարկ մը, գործարան մը, դեռութիւն մը կամ գերդեռութիւն մը մեծնայ ու որոշուի մեքոռոլոժին մնայ կեդրոնացած անձի մը կամ խմբակի մը ենթակայ, հակակշռելու որեւէ արութեսաբանութիւն չի կրնար յաջողիլ: Ժամկէտներ չեն յարգուիր զանազան դատճառներով, արտաքին ազդակներ ու նոյնիսկ կլիման իրենց դերը կ՚ունենան ձախողութեանց մէջ:

Աւելի դիւրին է տնտեսութեան մը համակարգը փոխել կաղիտալիզմէ ընկերվարութիւն ու համայնավարութիւն քան հակառակը. ստեղծելով նուազագոյն անգործութիւն, սնանկութիւն, բռուտութիւն ու յուսահատութիւն: Կ՚ըսուի թէ վերջին երեսուն տարիներուն, ընկերվարութեան դիմող դեռութիւններ սնանած են կապիտալիզմի վրայ: Ընթերցողին կը թողում այս մէկը ժխտելու կամ անոր հետ համաձայնելու դատողութիւնը:

Սակայն, դժուար է գտնել դեռութիւններ որոնք, վերջին քառասուն տարիներուն, համակարգ փոխեն համայնավարութենէ կապիտալիզմ ու յաջողին կարճ ժամանակուան մը մէջ:

Սովետական տնտեսական համակարգը հիմնուած էր նեցուկ կանգնելու հաղթականութեան վրայ. կարեւորը արժեքինը չէր այլ արդիւնաբերութիւնը, հաղթացիին գոհացումն ու բաւարար արտադրանքներու եւ ապասարկութիւններու հայթայթումը:

Քաղաքացին կը ստանար ձրի ուսում, բժշկական խնամք, շաբաթական հանրային փոխադրամիջոց - մետրո, օթոբուս, տրոլեյբուս, օդանաւ - ունէր իր ընկերային առահովութիւնը տրամադրող սպասարկութիւն, կենցաղային սպասարկման հիմնարկներ - ջուր, էլեկտրականութիւն, կեդրոնական ջեռուցում, կազ, ոչնչին ու տան վարձ շաբաթական աժան: Նոյնիսկ աժան ամառանոց, ճամբար ու հանգստարան: Այս բոլորին վրայ կու գար աշխատավարձ մը որմէ շատեր խնայողութիւն մէջ իրենց եկամուտէն մաս մը կը խնայէին: Շռայլներու մասին չեմ խօսիր:

Վեցերորդ վերակառուցումի կիրարկուած հաղթականութիւնն ու շուկայական յարաբերութիւններու նոր համակարգը եկաւ խախտելու «բաւարարուած» հաղթացիներու դիրքէն, ընտանեկան դիրքէն: Երբ դեռութիւնը չուզեր նեցուկ կանգնիլ ճարտարարուեստներու մէջ գործող դասակարգին, արդիւնաբերութիւնը կը հիմնուի արժեքիներու վրայ, հիմնական կարիքներ՝ ինչպիսին են ոչնչինը, կարագն ու միսը կը վաճառուին միջազգային գիներու մակարդակով, յառաջ կը բերեն ու բերած են ընկերային ու տնտեսական երկրաշարժ:

Համայնավարութենէ սեփական կաղիտալիզմ՝ այս փոփոխութիւնը որեւէ ձեւով ծրագրուած ըլլալ չի թուիր: Ընդհակառակը, երբ այսօր տեսնենք ու արդիւնք այս անցումային շրջանը զանազան անկախացած հանրապետութիւններու մէջ, վայրկեան մը կը հիասթափիմ ենք իրարու չհամապատասխանեցին: Կար մեծ երբ մը ծրագրին մէջ: (Տես նել Իվրնեի ծրագիրը):

Ըսի թէ այս անգամուան վերակառուցումին կը հաստատենք, թէ բարենորոգումը 500 օրուրնէ աւելի դիտի տեւէ: Զերոյ մրն ալ աւելցնենք: Տնտեսական բարենորոգումի հարց չէ, այլ տնտեսական համակարգ մրն է կառուցուելիքը, որ մարդկային տարրն է գլխաւորաբար որ դիտի կառուցի, ժամանակի կը կարօտի:

Ինչո՞ւ կը հաստատենք.

Առաջին – Եւրոպայի, Միացեալ Նահանգներու եւ Ճապոնի տնտեսութիւնները կարիքը կը զգան այս մեծ շուկային: Ու այս նոյնակին համար անոնք կ՚օժանդակեն տնտեսական ու ընկերային ու բնենոլոժիի մարզերուն մէջ ու գեղին կը դատարաստեն առդագայի իրենց շուկաներուն:

Երկրորդ – Եօքը ճարտարարուեստական դեռութիւններ անդամ են միջազգային Վաղուայի Յոնին, Համաշխարհային Դրամատան, Եւրոպական բարգաւաճման ու վերակերտման դրամատան ու այլ միջազգային հաստատութիւններուն: Բարեմաղթիր հանրապետութիւն ունի իր կողմէ դատուիրակներ այս հաստատութեանց մէջ: Հարցը միմիայն անդամակցիլ չէ, այլ իրամանչիր հանրապետութիւն կը ստանայ բեռնիք ազանդակութիւն, կ՚ըլլան ուսումնասիրութիւններ ու տնտեսագէտներ ունին իրենց յարմար տեղն ու վարկը ներկայ հաստատութիւններու մէջ: Տնտեսագէտը ձեռնարկի մը 113րդ անդամը չէ այլեւս:

Չորրորդ – Միջազգային հաղորդակցութեանց ցանցերը այնքան մը յառաջադիմած են - թաս. հեռաձայնային կայաններ, արբանեակներ, օդանաւային կայաններ, որ «Կլասնոսը»ը կ՚ըլլայ ամբողջական ու կատարեալ:

Հինգերորդ – Սովետական Միութեան յաջորդեց 15 անկախ հանրապետութիւններ որոնք ունեցան իրենց դրամանիշը, անցագիրը ու իրենց յատուկ օրէնսդրութիւնն ու սահմանադրութիւնը: Թէեւ կազմուեցաւ հաստատակաղեստրիին, սակայն ան հեռու է ըլլալէ միացեալ, ներդաշնակ ու խաղաղ:

Այս երկրամասի բնութիւնը մանաւանդ ձմեռը այնքան խիստ է որ դատճառած է խիստ նկարագիր ու խիստ ռէժիմներ: Այս շրջանի ժողովուրդներ ապրած են միշտ որոշ ճորտ ձարական շրջանէն մինչեւ համայնավարութեան սկսուելումը: Ճորտ ձարերուն ու ճորտ համայնավար տնտեսական համակարգին: Նոր շրջանը շատ լայն բացած է ազատութիւններու կարկինը ու այսպէս կոչուած տեմոքրացիայէն կը ապասպի հրաշքներ: Ո՞ւրեանով կը յարմարի տեմոքրացիան խիստ նկարագիր ունեցող ժողովուրդներուն: Այդ մէկն ալ կը թողում ընթերցողի դատողութեան:

Հայաստանի հանրապետութիւնը մաս կը կազմէր այս ամբողջութեան զոր կը կոչուէր Սովետական: Այս հանրապետութիւնն ալ կը գտնուի անկախ համակարգի ծիրին մէջ: Մեզի կը մնայ օգնել, օժանդակել ու նեցուկ կանգնիլ ուր որ կրնանք, երբ որ կրնանք, ինչպէս որ կրնանք, որովհետեւ մեր հայրենիքը կարողանայ յաջողակս անցընել այս երկունքը. նախորդող Հայաստանի սերունդը հասցուց հայրենիքը մինչեւ հոս: Մեզի կը մնայ շարունակել ապագայի տնտեսակերտումը ու մասնակցիլ այս սրբազան գործին: ■

ՄԻՐԵԼԻ ԴԻՄՈՐԴՆԵՐ

Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թեատրոնի կից՝ դերասանական ստուդիան, որի գեղարվեստական ղեկավարն է Հայաստանի ժողովրդական արտիստ Կարդ Խայվանիյանը, հայտարարում է 1993-94 ուս. տարվա լրացուցիչ ընդունելություն: Շրջանավարտները կստանան դերասանի որակավորում եւ կարող են աշխատել ինչպես երաժշտական կոմեդիայի, այնպես էլ՝ հանրապետության մյուս թատրոններում:

Ուսման տեւողությունը երեք տարի է:

Ուսանողները կապահովվեն կրթաթոշակով (հանրակացարան չի տրվում):

Դիմումներն ընդունվում են ս. թ. փետրվարի 10-28-ը, ամեն օր:

Կոնսուլտացիաները՝ փետրվարի 20-27-ը:

Քննությունները՝ մարտի 1-ից:

Հասցեն՝ Խորհրդարանի 4:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել՝ 52-10-64, 58-01-01:

Թատրոնի տնօրինություն

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԽԱՂԱՑԱՆԿ

Փետրվար, 1994 թ.

15, 23
ԺԻՐԱՅՐ ԱՆԱՆՅԱՆ
Տախի, տախի...
(կոմեդիա 2 գործ)

16, 24
ԱՐԱՍԱՏՈՏ ՊԱՊԱՅԱՆ
Արեւը ձեզ հետ
(կոմեդիա 2 գործ.)

17, 19, 27
ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ
Սիս, ներվեր, ներվեր...
(կոմեդիա 2 գործ.)

18, 26
ԱՐՄԵՆ ԷԼԲԱԿՅԱՆ
Ամենափրկիչ ջրհեղեղ
(կոմեդիա 2 գործ.)

20
ԳԻՅԱ ԿԱՆՉԵԼԻ
Խանումի արարքները
(երաժշտ. կոմեդիա 2 գործ.)

22, 28
Դ. Պսաֆաս
Հիմարից հիմարը
(կոմեդիա 3 գործ.)

Թատրոնի տնօրենն՝ ՀՀ արվեստի գործիչ, ՀՀ պետ մրցանակի դափնեկիր ԵՐՎԱՆԴ ՂԱՋԱՆՉՅԱՆ

Ներկայացումների սկիզբը ժամը 16-ին

Տոմսերը վաճառվում են թատրոնի տոմսարկղերում ամեն օր ժամը 10-ից մինչեւ 16-ը

Ընդունվում են կոլեկտիվ հայտեր հեռ. 58-01-01

Մերջիչ Պուլտուքեան Երեւանի Պետական-ազգային դրամատան առջեւ, օտար մասնագէտներու հետ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ

Մեղադրվում են բելգիացի նախարարները

Իտալիայում հայտնի դարձած եւ քաղաքական ընտրախաղում մեծ ավերներ գործած «Մաֆիա ձեռքեր» գործողությունը կարծես թե մոտ է գործել նաեւ Բելգիայի հանդարտ ու փոքրիկ թագավորություն: Վալոնների սոցիալիստական կուսակցության մեջ կաշառակերության համար կասկածվող որոշ նախարարներ այսօր սխալված են քաղաքություններ տալ ավիաշինական «Ագուստա» ֆիրմայի հետ իրենց կապերի առնչությամբ, որն Իտալիայում արդեն մեղադրվում է կաշառակերության գործով: Բելգիայի Լիեժ քաղաքի դատավորը փորձում է դարզություն մտցնել 1991 թ. բելգիական սոցիալիզմի առաջնորդական եւ վիճահարույց դեմքերից մեկի՝ Անդրե Կոլոսի գործունեության գործում:

«Ագուստայի» գործը հիմնովին սասանում է Բելգիայի քաղաքական համակարգը: Ամեն ինչ սկսվեց 1988 թ. երբ բելգիական բանակը գնեց «Ագուստա-109» տիպի 46 ուղղաթիռ, հրաժարվելով ֆրանսիական եւ անգլիական համանման ուղղաթիռներից: Դատավոր Վերնիկ Անսիայի քննությունը փորձում է ցույց տալ, որ այն ժամանակվա պաշտպանության սոցիալիստ նախարար Գի Կոնեթի կաբինետը խեղաթյուրել է վճռաբերի առաջարկների արդյունքները, որոնցով նախապատվությունը տա «Ագուստային»: Սոցիալիստական կուսակցության այն ժամանակվա նախագահ Գի Սպիտսեքսը դրա համար էր ստացել կասկածելի անցյալի տեր սոցիալիստ-սենատոր Գի Մաթոյի միջնորդությամբ: Վերջապես, սոցիալիստների Լիեժի գորեղ կազմակերպության հայտնի ներկայացուցիչ Անդրե Կոլոսը նույն



ոգեւ կարեւոր դեր էր խաղացել այդ կասկածելի գործարքներում:

Առայժմ քաղաքական որեւէ մեղադրանք չի ներկայացվել: Սակայն այս գործի վնասներն արդեն զգալի են. փոխվարչապետ Գի Կոնեթն, որը վալոնցի սոցիալիստների եւ ֆլամանդացի սոցիալ-քրիստոնյաների կառավարության վիճակը հեղինակել է: Ֆլամանդացի եւ վալոնցի ազատականները, որոնք հաղթանակի հաներ մեծ հնարավորություններ ունեն վաղաժամկետ ընտրությունների դեմքում, պահանջում են ներկայիս կառավարության հրաժարականը:

ՍԵՐՅԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Սիրիան Ասադից հետո

Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը, որը 1970 թվականից ի վեր իշխանության գլխին է, դեռ 65 տարեկան է, բայց նրա առողջությունն այնքան էլ բարվոք վիճակում չէ: Բժիշկները դեռ տասը տարի առաջ զարգել են, որ նա սրտի արատ ունի եւ տառապում է շաքարախտով: Իսկ հունվարի 21-ին նրա ավագ որդու՝ Բասել Ասադի ողբերգական մահն առավել այժմեական դարձրեց նախագահական փոխանորդի հարցը: Սիրիական օդուժի մայոր, 31 տարեկան Բասելը համարվում էր երկրի առաջադիմական ղեկավարը:

Քննարկելով այս հարցը The Economist հանդեսի (հունվարի 28) Դամասկոսի թղթակիցը գրում է, որ իրական իշխանությունն այնտեղ դեռեւս գտնվում է զինված ուժերի եւ անվտանգության ծառայությունների հսկողության տակ: Քաղաքական շրջաններում գլխավորապես երեք հոգու են համարում առավել ազդեցիկ. Հիմնք Շեհաբի անունով մի տունի մահմեդական, որ բանակի անձնակազմի հրամանատարն է, Աղնան Մախլուֆը՝ նախագահական թիկնապահների ղեկավարը եւ Ալի Դուբան ռազմական հետախուզության ղեկը: Վերջին երկուսը ալաուի ցեղից են եւ չնայած նշված երեք անձնավորություններն էլ կարող են միասին աշխատել, այնուամենայնիվ եթե իշխանության գլուխ անցնելու հարց ծագի, որն անտարակույս ինչոր ժամանակ մոտ ապագայում տեղի է ունենալու, ապա հասարակության հաստվածական շահերն անդրադարձնելու իրենց ազդեցությունը կունենան դրա վրա:

Չնայած Ասադը մեծամասնություն կազմող տունիներին որոշ իշխանություն տվել է, սակայն նրա արմատներն կապված են մնում ալաուիների հետ, որոնք ամբողջ Սիրիայում 13 միլիոն հաշվող բնակչության մեկ ութերորդ մասն են կազմում:

Քաղաքական ասպարեզում «մահմեդական» եղբայրների խմբակցությունը բավական թույլ է այն ժամանակից (1982) ի վեր, երբ Ասադը ջախջախիչ հարված հասցրեց նրանց: Նրա գլխավորած ալաուիների կառավարությունը լուրջ հայտ է ներկայացնում նրանց գոյությանն ու գործունեությանը: Այդ թվերին համայում Ասադի հաստակ ջոկատները հազարավորների են սպանել եւ փոքրել կազմակերպության ամբողջ «կառույցը»:



Բայց սիրիացիներից շատերն են այն համոզմունքին, որ մի օր արմատականները դարձյալ գլուխ կբարձրացնեն:

Բասս կուսակցությունը, որը մի ժամանակ նաեւ նույնքան ուժեղ էր, ինչքան բանակը, ներկայումս այնքան էլ հզոր չէ: Խորհրդարանում այդ կուսակցության պատգամավորները միացել են անկախականների հետ եւ կազմել այսպես կոչված առաջադիմական ճակատը: Սակայն խորհրդարանն ընդամենը կառավարության խոսափողն է: Անկախականները դրանում մեծ մասամբ գործարար մարդիկ են, «դրոֆեսիոնալներ» Սիրիայի հայտնի առեւտրական տունների ընտանիքներից, որոնք Ասադի տասը տարվա տնտեսական ազատականացման քաղաքականությունից ամենաշատն են օգտվել: Սակայն հակառակ իրենց տնտեսական ուժին, տունների գործարարներն առայժմ բոլորովին էլ չեն ձգտում քաղաքական իշխանության: Ալաուիների հետ համագործակցելով, նրանք շատ լավ հարմարվել են իրենց իրավիճակի հետ: Բայց մինչեւ ե՞րբ:

Դիտորդներն ու քաղաքական մեկնաբանները գտնում են, որ եթե իրական մի նոր հզոր ուժ առաջանա երկրում, ապա ժողովրդի յոթանասուն տոկոսն անկասկած կգնա նրա հետեւից:

Պատրաստեց ՀԱԿՈԲ ՕՈՒԼԻԿՅԱՆԸ

ՀԱՄԱՌՈՏ

ՄԱԿ-ը մերժել է սերբերի տարբերակը

ԲԵԼԳՐԱԴ, 10 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ: ՄԱԿ-ը չունի փաստաթղթեր, որոնք կհաստատեին սերբերի այն պնդումները, թե Սարաեւոյի շուկայում շաբաթ օրը տեղի ունեցած ողբերգությունը մահմեդականների գործն է: Այդ մասին Բոսնիայի մայրաքաղաքում հայտնեց ՄԱԿ-ի զաղթականների գործերի գերագույն կոմիսարիատի մամլո կցորդ Քրիս Յանովսկին: Նրա խոսքերով, պայթյունի ականատեսը դարձած կոմիսարիատի աշխատակիցը հերքել է բոսնիացի սերբերի ղեկավար Ռադովան Կարաջիչի այն հայտարարությունը, թե մահմեդականները ավելի վաղ մահացածների դիակներ եւ պլաստիկե նմանակումներ են օգտագործել զոհերի թիվն ավելացնելու համար: ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի մամլո ծառայության հաղորդման համաձայն, ՄԱԿ-ի դիտորդները ողբերգության վայրում հաշվել են 58 սպանված եւ 142 վիրավոր, ընդսմին վստահություն հայտնելով, որ լիակատար ցանկն ավելի մեծ կլինի: Իսկ, Սարաեւոյի հիվանդանոցներից եւ դիարաններից ստացված տեղեկությունների համաձայն, զոհերի ընդհանուր թիվը կազմել է 68 սպանված եւ 197 վիրավոր:

Քլինթոնի հայտարարությունը Լիբիայի վերաբերյալ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՆՏԱՖԱՔՍ: Լիբիայի քաղաքական գիծը եւ միջազգային ասպարեզում այդ երկրի վարքագիծը «չափազանց մեծ սպառնալիք» են ներկայացնում Միացյալ Նահանգների ազգային անվտանգության համար: Այդ մասին ասվում է ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի հայտարարության մեջ, որը տարածել է Սպիտակ տունը: Այդ փաստաթղթում, որը կցված է ամերիկա-լիբիական հարաբերությունների մասին նախագահի ամենամյա զեկուցագրին, որ նախատեսված է ԱՄՆ-ի կոնգրեսի համար, նշվում է, որ ի լրումն գործող միջազգային պատժամիջոցներին, անհրաժեշտ է լիովին արգելել նավթի մատակարարումներն այդ երկրից, եթե «Լիբիան շարունակի մարտահրավեր նետել միջազգային հանրակցությանը»: Նախագահը նաեւ նշել է, որ ինքը կարգադրել է խստացնել այն միջոցառումները, որոնք նպատակաուղղված են ԱՄՆ-ում թողարկված արտադրանքը, նախ եւ առաջ նավթի վերամշակման ու փոխադրման սարքավորումներն երրորդ երկրների կողմից Լիբիա վերարտահանելու արգելքին:

Հունամակեդոնական հարաբերությունների շուրջ

ԱԹԵՆՔ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՆՏԱՖԱՔՍ: Հունաստանի վարչապետ Անդրեաս Պապանդրեուն այստեղ հայտարարեց, որ հարեւան Մակեդոնիայի Հանրապետության հետ երկխոսությունն ավարտված է: Այդ հայտարարությունը հետեւեց ի պատասխան այն պայմանների ընդունելուց հարեւան պետության խորհրդարանի ղեկավար Ստոյան Անդոսի հրաժարման, որոնցով Հունաստանը պայմանավորում էր երկկողմ բանակցություններ սկսելու հնարավորությունը:

Ինչպես հայտնի է, Աթենքը Մակեդոնիայի Հանրապետությունից պահանջում է, որ վերջինս փոխի իր սահմանադրությունը, դադարի օգտվել պատմական «հունական» խորհրդանիշներից, ինչպես նաեւ վերջ տա բռնապետական քարոզչախոսությանը Հունաստանի հասցեին: Հունաստանը հրաժարվում է ճանաչել հարեւան պետությանը Սկոպիե մայրաքաղաքով, որն անկախ է դարձել Հարավսլավիայի տրոհվելուց հետո, եւ պահանջում է, որ մյուսներն էլ չճանաչեն այդ հանրապետությանը նրա ներկայիս անվամբ:

Հունաստանին դժգոհություն է առաջացրել հարուցել Մակեդոնիայի Հանրապետությունը Միացյալ Նահանգների որոշումը:

Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը կարող են ազդել կարգավորման վրա

ՍՈՍԿՎԱ, 10 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ: Աֆղանստանի ղեկավարությունը գտնում է, որ Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը կարող են նպաստել Աֆղանստանի ներքաղաքական ճգնաժամի կարգավորմանը: Այդ մասին լրագրողներին հայտարարեց Ռուսաստանում Աֆղանստանի դեսպան Աբդուլ Վահաբ Ասեֆին: Նրա կարծիքով, այդ երկու երկրները, հանդիսանալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներ, կարող են այդ կազմակերպության ներուժն օգտագործել Աֆղանստանի ղեկավարության եւ մոջահեդների խմբավորումների անմիջական բանակցություններին նպաստելու համար: Խոսելով նախկին ԽՍՀՄ-ի ռազմագերիների խնդրի մասին, Աֆղանստանի դեսպանը հայտարարեց, որ նրանց մեծ մասը գտնվում է կառավարության կողմից չվերահսկվող քաղաքական խմբավորումների ձեռքին: Նրա խոսքերով, Աֆղանստանի ղեկավարությունը շարունակում է ջանքերը տարբեր խմբավորումներում գտնվող ռազմագերիների ազատման նպատակով:

ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ

Արմատականների հաղթանակ Ինդոնեզիայում

Մի քանի շաբաթից ի վեր Ջակարտայի արմատականները կառավարությունից պահանջում էին Ինդոնեզիայում արգելել վիճակախաղը: Ի վերջո, նրանք հասան իրենց նպատակին: Նախագահ Սուհարտոն տեղի տվեց կրոնական առաջնորդների պահանջների դեմ հանդիման, որոնք վիճակախաղը իսլամին ներհակ են համարում: Այդ խաղը, որն Ինդոնեզիայում մեղմ ձեւով անվանել էին «մրցանակներով մարդասիրական նվիրատվություններ», մեծ ժողովրդականություն ուներ աղքատ խավերի մեջ, իսկ դրա եկամուտները պետությանը հնարավորություն էին տալիս ֆինանսավորել մարդասիրական ձեռնարկումներ, կառուցել մարզադաշտեր եւ օգնել բնական աղետների զոհերին: Վիճակախաղն այլեւս չկա: Բացի բախտավորներից

բազմաթիվ անհնազանդությունից, դրա վերացումը ցույց է տալիս նաեւ, որ իսլամ արմատականներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ունենում Ինդոնեզիայում, որտեղ մինչեւ վերջերս յուրահատուկ համաձայնություն գոյություն ուներ կառավարության եւ իսլամի միջեւ: Այժմ Ջակարտայի իր պալատում նստած նախագահ Սուհարտոն կարող է իրեն հարց տալ, թե 180 միլիոն բնակիչ ունեցող Ինդոնեզիան աշխարհի ամենամեծ մահմեդական երկիրը, շարունակու՞մ է արդյոք մնալ աշխարհիկ պետություն: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Մշակութային առումով, հիրավի, այսպես կարելի է կոչել 1994 թվականը: Մեզանից ուղիղ 200 տարի առաջ հեռավոր Հնդկաստանի Մադրաս քաղաքում լույս տեսավ «Ազդարար» դարբերականը, որը ոչ միայն սկիզբը դրեց հայ լրագրության հարուստ դաստմության, այլեւ իր մշակութային եւ լուսավորչական ուղղվածությամբ կարծես կանխորոշեց հայ մամուլի զարգացման հետագա ուղին՝ ուղղվածելով միաժամանակ նրա կարեւորագույն դերը՝ ազգադիտողականության եւ մեր ժողովրդի գոյատեւման գործում: Հոգեւոր հզոր զորու չէր տեղավորելու բոլոր մասնակիցներին, որոնցից շատերն այդ դեպքում էլ մինչեւ վերջ մնացին ոտի վրա կանգնած: Նրանց առջեւ հոգեւոր խոսքով հանդես եկավ «Եռանս ինքերնեյբրնը» ընկերության նախագահ, «Հայաստան-Հնդկաստան» ընկերության վերնախագահ Հովսեփ Սեֆերյանը: Նա եռանդուն ջանքեր է գործադրում ինչպես մեր երկու երկրների ու ժողովուրդների անվանական-բարեկամական կապերի շարունակման եւ ամրապնդման, այնպես էլ հնդկահայ գաղութի այսօրվա կյանքը աշխուժացնելու ուղղությամբ: Հերադեսի հիշատակին, նրա կատարած գործին, որի շարունակությունն են մեր նորանկախ հանրապետության բազմաբնույթ բերքերն ու այլ հրատարակություններ: Խայտաբղետ էր ինչպես մասնակիցների կազմը, տարիքն ու մասնագիտական հակումները, այնպես էլ նրանց ներկայացրած աշխատանքների գեղագիտական մակարդակը: Դասակազմը հավանաբար դժվարացել էր առաջնությունը միանշանակ որեւէ մեկին տալու հարցում եւ որպես մրցանակակիրներ ընտրվել էին հինգը, որոնք ոլորգեւորվեցին Հնդկաստան ուղեւորվելու անվճար ուղեգրերով: Քանի

«Ազդարարի» տարին սկսվեց

ԼԵՎՈՆ ԼԱՌԻԿՅԱՆ

լիցքերով հագեցորոշվող այս հոբելյանը դաստաք հանդիսավորությամբ եւ շտապով նշելու համար անցյալ տարվանից կազմված ոլեսական-հոբելյանական հանձնաժողովի ծրագրի համաձայն նախատեսվում էր հայտարարել այս հիշարժան իրադարձության խորհրդանիշի մրցույթ:

Այն նախաձեռնեց եւ անցկացրեց «Հայաստան-Հնդկաստան» բարեկամության ընկերությունը (նախագահ՝ Ռոբերտ Թոխմախյան): Հարկ է նշել, որ չնայած այս ծանրագույն եւ հոգատար օրերին, հիշյալ մրցույթին առձագանքեցին շատերը, որոնցից 52-ի աշխատանքները ցուցադրվեցին փետրվարի 9-ին Աստվածամայրի երկրների հնագիտության եւ համագործակցության հայկական ընկերության (ԱՕԿՍ) շենքի ցուցասրահում: Պատահական չէր ընտրված նաեւ բացման օրը. լրանում էր «Ազդարարի» հիմնադիր-խմբագիր եւ հայ լրագրության նախահայր Հարություն Շմավոնյանի մահվան 170-ը տարեդարձը: Ցավոք, Ազգային գրադարանում ծնված եւ մայր հայրենիքի ազատագրման եւ անկախության գաղափարով ոգի կյանքն առած ու փախճանված այս, ինչպես եւ հնդկահայ մյուս մտավորականների՝ Հովսեփ Էմինի, Հակոբ Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի եւ ուրիշներ, հիշատակի ոգեկոչմանն էր նվիրված ցուցահանդեսի բացմանը նախորդած հանդիսավոր հավաքը, որին մասնակցեցին դեսպանական դաշտանյաներ, մտավորականներ, արվեստագետներ, հասարակայնության ներկայացուցիչներ:

Նույն ընկերության դահլիճն ի տաղարձ հայացք նետելով խաղաքանանաց թեմ փորաբիվ, բայց կատարած գործերով նշանակալից այս հայկական գաղութի դաստական փառավոր անցյալին, բանախոսը մասնավորապես նշեց, որ «հնդկահայի բնաբանը միշտ եղած է «Լուսավորվիլ եւ լուսավորել»:

Ներկայացուցիչ մի քանի դարերի ընթացքում հայ ազգությունը ունեցել է մեծ դերակատարություն Հնդկաստանի մշակութային կյանքում: Հնդկաստանի ազգաբնակչության մեծ մասը հարգանքի տածում է հայերի նկատմամբ: Հնդկական գրականության մեջ հայերի մասին գրվել է հարյուրավոր գրքեր: Հնդկական գրականության ամենամեծ գրողներ Ռաբինդրանաթ Թագորը, Ռամանդ Ռոլանը, Ջորջ Բերնարդ Շոուն, Ռուդյարդ Կիպլինգը, Ջեյմս Ալենը, Ջեյմս Ֆրեզերը, Ֆրանսիս Ֆրեզերը, Ֆրանսիս Ֆրեզերը, Ֆրանսի

ՕԼԻՄՊԻԱԴԱ

Այսօր Լիլեհամերում կբոցավառվի 17-րդ օլիմպիական խաղերի ջահը

Հայաստանի մարզիկներն առաջին անգամ ձմեռային օլիմպիադայում

ԱՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այսօր Նորվեգիայի Լիլեհամեր քաղաքում հանդիսավորությամբ կբոցավառվի 17-րդ ձմեռային օլիմպիադայի ջահը, որը նոր էջ կբացի համաշխարհային օլիմպիական շարժման տարեգրքում: Այս օլիմպիադան կրկնակի ուրախալի է մեր հանրապետության մարզասերների համար, քանի որ Հայաստանի Հանրապետությունը առաջին անգամ իր պատմության մեջ, հանդես կգա իր պետական դրոշի ներքո:

12 ձմեռային մարզաձևերում 80 ափեղի պետությունների ներկայացուցիչներ կխաղարկեն մոտ 50 կոմպլեկտ մեդալներ: Նախորդի համեմատ մասնակից երկրների թիվը անհամեմատ աճել է: Այդ երկրների թվին է դասվում մեր հանրապետությունը, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի նորանկախ հանրապետությունները:

Առաջին անգամ Հայաստանի դրոշի դպրիվը նման կարգի խոշոր մարզաստուգատեսում կպաշտպանեն մեր երեք օլիմպիականները բոբսլեյիստներ Ժոսեֆ Ալմասյանը, Ջեննեթ Թոփալյանը և ծանրամարտի լեռնադահուկորդ Արսեն Հարությունյանը: Չնայած վերջինիս մասնակցությունը օլիմպիադային հարցականի տակ է: Բանն այն է, որ օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունք է տալիս գործակիցների անհրաժեշտ քանակը: Դահուկավազքում այդ գործակիցները հաշվվում է տուգանային միավորներով: Այսպես մինչև 88 տուգանային միավոր ունեցող մարզիկներին են թույլատրվում մասնակցել օլիմպիադային, այն դեպքում, երբ Արսեն Հարությունյանի գործակիցը 105 տուգանային միավոր է: Այդ պատճառով մեր լեռնադահուկորդի մասնակցությունը մնում է հարցականի տակ եւ այն խնդրո առարկա կլինի Օսլոյում կայանալիք օլիմպիական կոմիտեի նստաշրջանում: Լեռնադահուկորդների մրցումների մեկնարկը կտրվի փետրվարի 20-ին:

Մեր մյուս մասնակիցները ամերիկահայ բոբսլեյիստներ Ալմասյանն ու Թոփալյանը հանդես կգան երկտեղանոց անձնակազմով մրցումներում: Մեր հայրենակիցները միջազգային մրցումների զգալի փորձ ունեն, մասնակցել են բազմաթիվ մրցաշարերի: Նրանց մարզում է ամերիկահայ փորձառու Պոլ Ֆարադյանը, որը նաև հոգացել է այն ողջ ծախսերը, որոնք կապված են օլիմպիական խաղերի նախապատրաստական հավաքի եւ մասնակցության հետ:

Հայաստանի պատվիրակությունը ղեկավարում է հանրապետության Ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Ռաֆայել Թորոյանը:

Ինչ խոսք, մեր մարզիկների առաջին ելույթներից չենք էլ անկնկալում որեւէ զգալի հաջողություններ, հետեւելով օլիմպիական հայտնի սկզբունքին «Գլխավորը հաղթելը չէ, այլ մասնակցելը»:

Ինչեւէ: Լիլեհամերի «Լուսգարդսբակեն» մարզաշաբաթում այսօր հանդիսավոր կերպով կբարձացվի օլիմպիական դրոշը:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատվիրակները կմրցեն

Ներկայացնում ենք բոբսլեյի եւ լեռնադահուկային սպորտի պատմությունը, որը, մեր կարծիքով, կհետաքրքրի մեր ընթերցողներին, հանի որ հենց այս մարզաձեւերում մեր հանրապետության ներկայացուցիչները հանդես կգան Լիլեհամերում:

Բոբսլեյ

Բոբսլեյը՝ հատուկ սարքավորված սառցուղիով, ղեկավարվող սահնակներով արագընթաց վայրէջքը, ի հայտ է եկել 19-րդ դարի վերջին, Շվեյցարիայում: Այս մրցաձեւը տարածված է ԱՄՆ-ում, Կանադայում եւ Արեւմտյան Եվրոպայի երկրներում: Բոբսլեյի եւ տոբոգգանի միջազգային Ֆեդերացիան (ՖԻԲՏ) ստեղծվել է 1923 թվականին: Սկզբնական շրջանում մրցումներին մասնակցում էին եւ տղամարդիկ, եւ կանայք, իսկ 20-րդ դարի սկզբերից սկսած բոբսլեյը դարձավ միայն տղամարդկանց մարզաձեւ: Սահնակները կառավարում են ղեկով եւ ունեն արգելակներ: Սահնակների թափը ամրացված է երկու սահաշղուսների վրա (աջերի զույգը շարժական է): Երկտեղանոց սահնակները կշռում են 165 կգ (երկարությունը՝ 270 սմ է): Իսկ չորստեղանոցները՝ 230 կգ (երկարությունը՝ 380 սմ է): Մրցուղին, որն իրենից ներկայացնում է երկաթբետոնյա հիմքով մի փոսորակ, լի է տեսակի պտույտներով՝ ներով ու շրջադարձերով, որի երկարությունը 1500-2000 մետր է: Մրցաշարավարությունը հաղթահարելու ընթացքում սահնակների արագությունը ժամում հասնում է 100 կմ/ժ:

Մրցումներն անցկացվում են երկտեղանոց եւ չորստեղանոց անձնակազմով: Ի դեպ, բոբսլեյիստներին ներկայացվում են հատուկ պահանջներ: Նրանց ընդհանուր քաշը երկտեղանոց սահնակով չպետք է գերազանցի 210 կիլոգրամից, իսկ չորս տեղանոց անձնակազմով՝ 400 կգ: Բանն այն է, որ մարզիկների հավասար վարողության դեպքում, առավելությունն արհեստականորեն ստանում է ավել քաշ ունեցող անձնակազմը: Դա բոլոր մասնակիցների համար ստեղծում է հավասար պայմաններ: Բոբսլեյի ափխարհի առաջնություններն սկսել են անցկացվել 1927 թվականից (ամենամյա մրցումներն սկսել են կազմակերպվել 1931 թվականից): Եվրոպայի առաջնությունն առաջին անգամ տեղի է ունեցել 1927 թվականին, իսկ Եվրոպայի ամառային առաջնությունն սկզբավորվել է 1965 թվականից: Ձմեռային օլիմպիական խաղերի ծրագրում բոբսլեյը մտել է 1924 թվականին (երկտեղանոց սահնակների մրցավազքը՝ 1932 թվականին): Միայն մեկ անգամ է, որ բոբսլեյը դուրս է մնացել օլիմպիական խաղերի ծրագրից: 1960 թ. ամերիկյան Սկվո Վելլի քաղաքը չկարողացավ կառուցել բոբսլեյի մրցուղի: Օլիմպիական մրցումներում այժմ են ընկել ԱՄՆ-ի, Գերմանիայի, Շվեյցարիայի բոբսլեյիստները: ■

Լեռնադահուկային սպորտ

Լեռնադահուկային սպորտի մեջ մտնում են հատուկ սլալոմը, հսկա սլալոմը, արագընթաց վայրէջքը եւ այդ ձեւերի համակցությունը՝ ալպիական եռամարտը (սլալոմ, հսկա սլալոմ, արագընթաց վայրէջք) կամ ալպիական երկամարտը (սլալոմն ու արագընթաց վայրէջքը): Հսկա սլալոմը եւ եռամարտը առավել երիտասարդ ձեւեր են, իսկ առավել հինը՝ սլալոմն ու արագընթաց վայրէջքը: «Սլալոմը» Նորվեգական բառ է: Այն նշանակում է «հետքի վրա»: Ձյունափից դեռի հարթավայրերն ու կիրճերն իջնող ոլոր մոլորի հետքը, որը փայլփլող ձյան վրա է թողնում դահուկորդը: Ժամանակակից սլալոմիստների նախապատերը Նորվեգացիներն են, որոնք դահուկներով խոյմենկոլենյան լեռներից իջնում էին Խրիստիանայի (Օսլո) տակ: Նրանց շրջադարձերը կատարում էին փայտյա ձողի միջոցով՝ մեկ այս, մեկ մյուս կողմից նրանով արգելակելով ընթացքը: 19-րդ դարի վերջերին, Խրիստիանայի մոտակայքում, մայրաքաղաքի եւ Տելեմարկ փոքրիկ բնակատեղիի դահուկորդների միջեւ հետաքրքիր մրցույթ տեղի ունեցավ: Այն ժամանակվա մամուլի վկայությամբ տելեմարկցիները «սահում էին ուղիղ, հոյաս կպգնած, ձողի փոխարեն աջ ձեռքում ցուցադրաբար տնածառի փոքրիկ ճյուղ բռնած»: Մեր դարի առաջին քառորդում «տելեմարկ» տարածված շրջադարձին եկավ փոխարինելու ավելի կատարելագործված «խրիստիանա» շրջադարձը: Հաստատում են, որ «մաքուր խրիստիանա» շրջադարձն առաջին անգամ պատահականորեն է ստացվել: Սլալոմի եւ արագընթաց վայրէջքի մրցումների կոնկրետ կանոնները, որոնք էլ որ տարօրինակ է, 1922 մակերեսի բրիտանական համարյա հարթ ու անձյուն կղզիների ներկայացուցիչ Ա. Լունը: Սլալոմի եւ արագընթաց վայրէջքի առաջին չեմպիոնն էլ 1931 թ. դարձավ նույնպես անգլուհի է. Մակինոնը:

Դրանից հետո բրիտանացիներն էլ ոչ մի անգամ հաղթանակի չեն հասել:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐ

Ընտրյալներից ընտրյալները

Ֆրանսիական Շամոնի քաղաքի անունը ոսկե տառերով է գրված օլիմպիական տարեգրության մեջ: Հենց այս քաղաքը դարձավ այն մեկնակետը, որտեղից 1924 թվականի հունվարի 25-ից իրենց պատմությունը սկսեցին Ձմեռային օլիմպիական խաղերը: Առաջին խաղերին մասնակցում էին 16 տերությունների 293 մարզիկներ: Բոլորից շատ մեդալներ վաստակեցին նորվեգացիները՝ 4 ոսկի, 7 արծաթ եւ 7 բրոնզ: Հետագա օլիմպիադաներին հաջողությունը կրկին ուղեկցում էր նորվեգացիներին, որոնք գրեթե միշտ նվաճում էին ամենից շատ մեդալներ: Եւ պատահական չէ, որ ներկա թվով 17-րդ խաղերի անցկացման վայրը ընտրվել է Նորվեգիան, մասնավորապես Լիլեհամեր քաղաքը: Նորվեգիայի հյուսիսում գտնվող այս փոքրիկ քաղաքը սակավաթիվ բնակչություն ուներ եւ նորվեգացիները չէին էլ ձգտում բնակություն հաստատել այնտեղ: Սակայն այսօր արդեն Լիլեհամմերը համաշխարհային ճանաչում է ստացել եւ միլիոնավոր հեռուստադիտողներ հնարավորություն կունենան հետեւել այդ քաղաքում անցկացվող խաղերին: Օլիմպիական ծրագրով նախատեսված մարզաձեւերում մրցումներ կընթանան նաեւ Լիլեհամերի մերձակայքում գտնվող Ռինգեբրու, Օուեր, Համար եւ Գժեվիկ քաղաքներում:

Գիշերային Լիլեհամերի Օլիմպիական ավանը

Ձմեռային օլիմպիադայի բոլոր մայրաքաղաքները

1. 1924 թ. Շամոնի (Ֆրանսիա)
2. 1938 թ. Սանկտ Մորից (Շվեյցարիա)
3. 1932 թ. Լեյք Պլեյսիդ (ԱՄՆ)
4. 1936 թ. Գարմիշ Պարտենկիրհեն (Գերմանիա)
5. 1948 թ. Սանկտ Մորից (Շվեյցարիա)
6. 1952 թ. Օսլո (Նորվեգիա)
7. 1956 թ. Կորտինա դ՝ Ամպեցո (Իտալիա)
8. 1960 թ. Սկվո Վելի (ԱՄՆ)
9. 1964 թ. Ինսբրուկ (Ավստրիա)
10. 1968 թ. Գրենոբլ (Ֆրանսիա)
11. 1972 թ. Սապորո (Ճապոնիա)
12. 1976 թ. Ինսբրուկ (Ավստրիա)
13. 1980 թ. Լեյք Պլեյսիդ (ԱՄՆ)
14. 1984 թ. Սարաեւո (Հարավսլավիա)
15. 1988 թ. Կալգարի (Կանադա)
16. 1992 թ. Ալբերվիլ (Ֆրանսիա)
17. 1994 թ. Լիլեհամեր (Նորվեգիա)

Ալպերի բնիկ բնակիչներից՝ ավստրիացիները, Ֆրանսիացիները, Շվեյցարացիները եւ իտալացիները, դարձան առաջատարներ: Նրանք մինչեւ օրս էլ միջազգային խոշոր մրցումների հաղթողներն են:

Լեռնադահուկային սպորտը ձմեռային օլիմպիական խաղերի ծրագրի մեջ ընդգրկվել է 1936 թվականին: Այժմ օլիմպիական մրցուղիներում կանայք եւ տղամարդիկ մեդալների երեք կոմպլեկտ են խաղարկում հատուկ սլալոմ, հսկա սլալոմ, արագընթաց վայրէջք ձեւերից: Ափխարհի առաջնությունների ծրագիրն ընդլայնված է. ավելանում է սլալոմում, հսկա սլալոմում եւ արագընթաց վայրէջքում հավասած նվազագույն սլալոմների գումարով: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐԱԿԱՐԳ

ՊԱՏԵՐԱԶՄ

Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման շարունակական ջանքեր

ԲԱՔՈՒ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ԹՈՒՐԱՆՍՆԱՐՔ: Ադրբեջանի Գերագույն խորհրդի փոխնախագահ Ա.Ֆիյադին Ջալիլովը երեկ Բաքու վերադարձավ Սանկտ Պետերբուրգից, որտեղ փետրվարի 8-9-ը ԱՊՀ-ի միջխորհրդարանական համաժողովի նիստ էր տեղի ունենում:

Փետրվարի 9-ին Ա. Ջահիրովը մամլո ասուլիս անցկացրեց Սանկտ Պետերբուրգում: Այն նախաստեղված էր առավոտյան, բայց հետաձգվել էր այն դյուցազնով, որ առավոտյան տեղի էր ունեցել Ադրբեջանի փոխնախագահի արտաքսային հանդիպում Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանի հետ, վերջինիս խնդրանքով: Մամլո ասուլիսում, Ա. Ջալիլովն ափսոսանք հայտնեց այն կապակցությամբ, որ ԱՊՀ-ի մասնակից պետությունների միջխորհրդարանական համաժողովի խորհրդի նիստում եւ Բ. Արարքցյանի հետ կայացած հանդիպման ժամանակ, Ադրբեջանի նախաձեռնությունները արձագանք չգտան հայկական դաշտիրակության կողմից: Ա. Ջալիլովը հաղորդեց, որ Բ. Արարքցյանի հետ կայացած հանդիպման ժամանակ ինքը վերսին հավաստեց Լեռնային Ղարաբաղին առնչված հակամարտությունը խաղաղ կարգավորելու Ադրբեջանի ձգտումը նախագահ Հեյդար Ալիեւի խաղաղ նախաձեռնությունների հիման վրա, որոնց էությունը հանգում է կրակը դադարեցնելու եւ բանակցությունների սեղանի շուրջ նստելու Ադրբեջանի դաշտրաստակամությանը, դայմանով, որ հայկական զորքերը հեռանան Ադրբեջանի գինակալված տարածքներից:

Դրա հետ մեկտեղ Ջալիլովը նշեց, որ Ադրբեջանը դատրաստ է քննարկել ցանկացած խաղաղ նախաձեռնություններ, որոնք նպաստակամդված են հակամարտության կարգավորմանը: Նա մասնավորապես «մեծ հույսեր» կապեց Կրգզստանի խորհրդարանի ղեկավար Շերիմկուլովի միջնորդական առաքելության հաջողության հետ:

Թուրան. Մեղեքկան Շերիմկուլովի միջնորդական առաքելությունը ձեռնարկվել էր ԱՊՀ-ի միջխորհրդարանական համաժողովի շրջանակներում, անցյալ տարվա սեպտեմբերի երկրորդ կեսին: Բանագնացությունը հաստրել էր այցելել Բաքու եւ Երեւան: Հայերի կողմից Ադրբեջանի Կուբաթլիի եւ Զանգելանի շրջանների գրավումից հետո միջնորդությունը սառեցվեց: Բանագնացության կազմի մեջ մտնում էին Բելառուսի, Ղազախստանի, Կրգզստանի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի ներկայացուցիչները: ԱՊՀ-ի դեսերբուրգյան նիստում որոշվեց վերսկսել Շերիմկուլովի բանագնացության միջնորդական ջանքերը:

ՈՒԿՐԱԻՆԱ

Լիբերալ-դեմոկրատները կոչ են անում հակազդել Ժիրինովսկուն

ԿԻԵՎ, 10 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ-ՍՆԱՐՔ: Ուկրաինայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը տարածել է աշխարհի բոլոր ազատական եւ լիբերալ-դեմոկրատական կուսակցություններին ուղղված դիմում, առաջարկելով իրենց վերաբերմունքն արտահայտել Ռուսաստանի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության նկատմամբ: Դիմումի մեջ ասվում է, որ իր գոյության ու գործունեության 3 տարում այդ կուսակցությունն ակնհայտ դարձրեց, որ ինքն ընդհանուր ոչինչ չունի ոչ ազատականության, ոչ էլ ժողովրդավարության հետ: Ավելին, այդ կուսակցության ղեկավար Վլադիմիր Ժիրինովսկին եւ նրա մերձավորագույն շրջապատը մշտապես ցուցադրում են իրենց հավատարմությունն ամբողջատիրությանը, ազգայնականությանը եւ ռազմամոլությանը, դրանով իսկ ջնջելով ազատականության հիմնական սկզբունքները, այն է անձի իրավունքներն ու ազատությունը, մարդասիրությունը, ժողովրդավարությունը, նպատակին հասնելու ոչ բոլոր մեթոդները:

Ռուսաստանի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության ստեղծումը համարելով «ԽՄԿԿ-ի եւ ՊԱԿ-ի ասիճանավորների սադրանք, որոնց նպատակն է արգելակել ազատական գաղափարների ու կառույցների զարգացումը», Ուկրաինայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունն ընդգծում է, որ ներկայումս «հետկոմունիստական երկրներում միլիոնավոր մարդիկ ազատականությունն անմիջականորեն կապում են ֆաշիստական գաղափարների հետ, որոնք ավելի ու ավելի բարձր են հնչում Վլադիմիր Ժիրինովսկու շրթներից»: ■

Վնասազերծվել է մեծ ելուզակախումբ

ԿԻԵՎ, 10 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ-ՍՆԱՐՔ: Ուկրաինայի եւ Ռուսաստանի միլիցիայի աշխատակիցների համատեղ ջանքերով վնասազերծվել է մի վտանգավոր ելուզակախումբ, որը մեքենաներ էր կողոպտում Խարկովի ու Բելգորոդի մարզերի ճանապարհներին: Դիտարկության նվազագույն փորձի դեպքում կողոպտիչները գործի էին դնում հրազեն: Հանցախումբը գլխավորում էր փորձառու քրեական հանցագործ: Նա իր ենթականերին մանրակրկիտ կերպով ընտրում էր, դահանջելով խիստ կարգապահություն եւ խմբի շարժունակություն:

Կալանվածներից առգրավվել են ավտոմոբիլներ եւ զենք: Հետաքննության ընթացքում ակնհայտ դարձավ, որ կողոպտիչների հիմնական զոհերն են դարձել տարանցիկ մեքենաների վարորդները: Քննչական խումբը դիմում է Խարկովի եւ Բելգորոդի մարզերի ճանապարհներին անցյալ տարվա սեպտեմբերից նոյեմբեր հարձակման ենթարկված վարորդներին կոչ անելով այդ մասին հայտնել միլիցիային: ■

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզը ողջունում է

ՓԱՐԻԶ, ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ֆրանսիան ողջունում է ՆԱՏՕ-ի ընդունած հաստատակամ ու հստակ որոշումը, եւ Բոսնիայի հանգամարտության բոլոր մասնակիցներին կոչ է անում ուժի գալ եւ ռազմական գործողությունների սասկացումը թույլ չտալ: Այդ մասին ասվում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության այսօր տարածած հայտարարության մեջ: Փաստաթուղթ ինքնաթիռի Ռ. Ռոնիայի դաշնային սերբերից պահանջել է 10 օրվա ընթացքում ծանր սպառազինությունը Սարաեւոյից հեռ հաեռ 20 կմ: Հակառակ դեպքում, նրանց հարվածներ կհասցվեն օդից: Միջազգային հանրակցության կողմից ակտիվության այդ դրսեւորումը պետք է հետեւանքներ ունենա, ասվում է հայտարարության մեջ: Նա պետք է վճռականություն դրսեւորի կատարելու ընդունած որոշումները: Ֆրանսիան եւ նրա եվրոդական ու ամերիկյան դաշնակիցները, շփման մեջ լինելով Ռուսաստանի հետ, պետք է կրկնապատկեն ջանքերը, որպեսզի Բոսնիայում արագ հասնեն հաշտության համաձայնագրի կնքման: Եվրախորհրդի առաջ բաված դլանի հիման վրա: ■

ԲԱՐՔԵՐ

Ընդհատակյա հասարակաց տներ

ՎՈՐՈՆԵԺ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՄՆԱՐՔ: Վերակառուցման թեմ շրջանում գիտության եւ առեւտրի զարգացմանը նպաստելու նպատակով Վորոնեժում գրանցվել էին մի շարք մասնավոր ֆիրմաներ այնպիսի անվանումներով, որոնց վրա անհնար էր ուշադրություն չդարձնել. «Կադրիլ», «Վիզա», «Վերսալ», «Վիզիտ», «Մենուետ»: Բայց ինչդես Ռուսաստանի լրատվական գործակալության թղթակցին հաղորդեցին ներքին գործերի վարչությունում, ինչական մարմիններն ուշադրություն են դարձրել այն բանին, որ այդ ֆիրմաները գիտությունն ու առեւտուրը հասկանում էին խիստ յուրովի: Դրանց տները «գիտական հիմնավորմամբ» ուսումնասիրել են դահանջարկը եւ... «գեղեցիկ սեռի» լայն առեւտուր ծավալել, բացելով ընդհատակյա հասարակաց տներ: Տրամադրվող սպասարկումների 1 ժամի արժեքը 30-40 հազար ռուբլի: Առանձնապես գնահատվում էին մանկահասակ աղջիկները: Հենց միայն մեկ գործողության ընթացքում, հաղորդել են Վորոնեժի ներքին գործնախարարությունում, կալանվել էր 59 կին, որոնց մեծամասնությունը ամուսնացած էր, ուներ երեխաներ: Բայց, ինչդես դարզվեց, դա սոսկ աննշան մասն է «աշխատակցուհիների», անառականոցներ դահողները այդդես են անվանում սիրո քրմուհիներին: ■

Եղանակը Հայաստանում

ՀԱՄԱՌՈՏ

Զարգացնել Շանհայը

Չինաստանի ծերունազարդ առաջնորդ Դենգը վերջին մեկ տարվա ընթացքում առաջին անգամ հեռուստատեսությամբ ելույթ ունենալով կոչ է արել առավել մեծ թափ հաղորդել Շանհայի բարգավաճմանը: Նկատվել է, որ այդ խաղաղ այցելած ղեկավարի առաջարկությունը չափազանց թույլ է:

Իրանում աճել է գազի արդյունահանումը

ԹԵՀՐԱՆ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Իրանում բնական գազի օրվա հանույթը հասել է 111 միլիոն խմ-ի որը համապատասխանում է վառելանյութի այդ տեսակի նկատմամբ դահանջմունքներին: Վերջին 5 տարում երկրում գազի տարեկան տդառում 11,4 միլիարդից աճել հասել է 28,9 միլիարդ խմ.: Դրա շնորհիվ հաջողվել է տնտեսել գրեթե 16 միլիարդ դոլար, որոնք հակառակ դեպքում ծախսվելու էին նավթաքիմիական մթերքների ներմուծման վրա:

Հունաստանը օգնում է Ադրբեջանին

ԲԱՔՈՒ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ՄՆԱՐՔ ԹՈՒՐԱՆ: Հունաստանի կառավարությունը որոշել օգնություն գաղթականների համար, տաս տոննա մանկական սնունդ է առաքել Ադրբեջան: Մարդասիրական բեռն արդեն բեռնատար ինքնաթռիռով Բաքու է հասցվել Թուրքիայի եւ Վրաստանի տարածքով: Մարդասիրական բեռը գաղթականներին է բաշխվելու ՄԱԿ-ի գաղթականների գործերի կոմիսարիատի աշխատակիցների օգնությամբ: Հունաստանի կառավարությունը մտադիր է այսուհետեւ էլ մարդասիրական օգնություն ցույց տալ Ադրբեջանին:

Երկրաշարժ Թուրքիայում

ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեյսմիկ դաշտպանության ազգային ծառայության դիտակայանները փետրվարի 10-ին գրանցել են ստորգետնյա ցնցումներ Թուրքիայի տարածքում: Առաջին ցնցումը, որի էդիկենտրոնը գտնվում է Դողուբայազետ քաղաքից 12 կմ դեպի հյուսիս-արեւմուտք, տեղի է ունեցել տեղական ժամանակով 2-ն անց 58 րոպեին: Ուժգնությունը եղել է 4 բալ: Մոտավորապես երկու ժամ հետո՝ 4-ն անց 48 րոպեին հետեւել է հաջորդ դարձյալ 4 բալանոց ուժգնությամբ ցնցումը: Այս անգամ երկրաշարժի էդիկենտրոնը գտնվել է Վան քաղաքից 80 կմ դեպի արեւելք:

ՍՐՅՈՒՆԳ

1993 թ. մայիսին Կիլիկիո կաթողիկոսության ԱՄՆ արեւելյան շրջանի եւ Կանադայի Ազգային առաջնորդությունը մոգույր հայտարարեց Նյու Ջերզիում նոր եղեռնի եւ Հայաստանի վերածնունդին նվիրված հուշարձան կառուցելու համար: Մոգույրին մասնակցելու բազմաթիվ շնորհալի արվեստագետներ: Կազմակերպվեց երկշաբաթյա ցուցահանդես նաստարարանների տանը: Հայաստանում նախնական ընտրանքից հետո 10 ստեղծագործությունների լուսանկարներ ուղարկվեցին Ազգային առաջնորդություն (Նյու Յորք), որտեղ ընտրյալ հանձնաժողովը սահմանեց մրցանակները: Առաջին տեղը վաստակեց Ռոմ Գեւորգյանն իր «Փիենիկ» ստեղծագործությամբ եւ արժանացավ 1200 դոլար մրցանակի: Երկրորդ տեղը (Անանա խաչքար) շահեց Հուլիկ Կարապետյանը, ստանալով 600 դոլար հոնորար: Երրորդ մրցանակին արժանացավ Լեւոն Վարդանյանը (Շղարշապատ խորան) եւ ստացավ 300 դոլար մրցանակ: Մրցույթի յոթ մասնակիցները ստացան 150-ական դոլար իրախուսական մրցանակներ:

Հաշվետվություն մրցույթի կազմակերպման դատասխանատվություն կրող Գայանե Մանուկյան-Մելիքոնյան կրթական հիմնադրամն իր շնորհակալությունն է հայտնում բոլոր մասնակիցներին եւ մաղթում հաջողություն եւ ստեղծագործական բուռն եռանդ:

ԼՈՏՈ

«ԼՈՏՈ» ԲԱՆԿԸ

Ընդունում է ավանդներ եւ դրանց դիմաց վճարում է

Ամերիկյան դոլար

1 ամսվա համար	10 %
3 ամսվա համար	35 %
Դրամ	
3 ասվա համար	45 %
Ռուսական ռուբլի	
1 ամսվա համար	15 %
3 ամսվա համար	55 %

Պուշկինի 9 (մուտք Աբովյան փողոցից) հեռ. 58-28-36
Հանրապետություն 67 հեռ. 56-51-07
Չեխով 23 հեռ. 46-25-27
Մարշալ Բաղրամյան 79, հեռ. 27-05-16
Կոմիտաս 52, հեռ. 23-12-55, 23-08-52
«Անի» հյուրանոց 507, 514 տեղանքներ հեռ. 59-45-14, 56-49-30

«ԼՈՏՈ» բանկը հայտնում է իր ավանդատուներին, որ նախկինում դրված ավանդների համար վերահաշվարկը կատարվում է սույն թվի փետրվարի 15-ից:

ՀՀ կառավարության «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Աբովյան 2 Տպաքանակ թիվ 65. Գինը 69149. Տպագրված է տպագրության 11.02.1994 Պատվեր 1692 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@